

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՆԱԽԱԼՄԱՐԱՆ

Մխիթարյանների մանուկը

«ԲԵՐՍԻԿԵՐ»

(1843-1880-ԱԿԱՆ ԹԹ.)
(ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ)



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԻ ՄԱՄՈՒԼԸ

(«ԲԱԶՄԱՎԷՊԸ» 1843-1880-ական թթ.)

(դասախոսություններ)

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

2019

ՀՏԴ 070(091)(042.4)
ԳՄԴ 76.02գ7
Մ 793

*Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ ժուռնալիստիկայի
ֆակուլտետի գիրխորհուրդը:*

Կազմող՝ Բ. Գ. Ք. Լուսինե Խաչատրյան
Գրախոսներ՝ Բ.Գ.Ղ., պրոֆեսոր Դավիթ Պետրոսյան
Բ.Գ.Ք., դոցենտ Նադաշ Մարտիրոսյան

Մ 793 Մխիթարյանների մամուլը («Բազմավեպը» 1843-1880-ական թթ.): Դասախոսություններ / ԵՊՀ: Կազմ.՝ Լ. Խաչատրյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2019, 72 էջ:

Դասընթացը ներկայացնում է Վենետիկի Մխիթարյանների «Բազմավեպ» հանդեսի անցած կեսդարյա ճանապարհը (1843-1880-ական թթ.):

ՀՏԴ 070(091)(042.4)
ԳՄԴ 76.02գ7

ISBN 978-5-8084-2365-7

© ԵՊՀ հրատ., 2019
© Կազմողի համար, 2019

ԴԱՍԵՆԹԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ

Դասընթացի նպատակն է ներկայացնել Վենետիկի Մխիթարյանների «Բազմավէպ» հանդեսի զարգացման երեք շրջափուլերը, որոնք գիտագործնական առումով կարող են օգտակար լինել հայ մամուլի պատմության, գրականության մասնագետներին, ինչպես նաև բուհերում լրագրության ֆակուլտետի ուսանողներին:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԸ

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը՝

1. կծանոթանա «Բազմավէպ» հանդեսի անցած ճանապարհին,
2. պատկերացում կկազմի խմբագիրների գործունեության և գաղափարական դիրքորոշումների մասին,
3. կուսումնասիրի հանդեսի էջերում հրապարակված տարաբնույթ հոդվածները՝ հիմք ընդունելով սոցիալ-մշակութային առկա իրավիճակը,
4. առանցքային այդ մեկնակետերից կվերլուծի և կմեկնաբանի հանդեսում արծարծված հոգևոր-մշակութային և ազգային կյանքի հիմնախնդիրները,
5. կբացահայտի հանդեսի գրական քաղաքականության կենսագործման եղանակները:

ԴԱՍԵՆԹԱՅԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

Դասընթացը բաղկացած է դասախոսություններից և սեմինար պարապմունքներից: Սեմինարների ժամանակ նախատեսվում է դասախոսությունների յուրացմանն ուղղված գործնական հանձնարարությունների կատարում, զեկուցումների պատրաստում, ինչպես նաև լուսապատկեր-սահիլկների (սլայդների) դիտում: Սեմինար պարապմունքները կունենան առավելապես զրույցի և քննարկման բնույթ:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ **Դաս 1 (2 ժամ դասախոսություն)**

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ

XIX դարում արդյունաբերության զարգացմանը համընթաց խորագույն տեղաշարժեր են արձանագրվում նաև մամուլի բնագավառում: Տեղեկատվության պահանջը դառնում է էլ ավելի տարաբնույթ ու արտահայտված, որի համապատկերում ձևավորվող «ընթերցող հանրույթը» փնտրում է իր մշակութային-բանական հետաքրքրությունները բավարարող նորանոր աղբյուրներ: Մամուլը զարգանում է իրականության բարդ երևույթների ներգործության ներքո՝ արտացոլելով իր համար նոր հիմնախնդիրներ և դրանց լուծման փնտրտուքների ուղիներ: Ռուբերտ Պրուտցի բնորոշմամբ՝ մամուլը դարաշրջանի յուրօրինակ «օրագիր» է, ուր վերջինս ամենօրյա գրառումների միջոցով իր ընթացիկ պատմությունն է ներբերում՝ քննադատելով և գնահատելով այն¹: Ըստ այդմ՝ լրագրությունն ինքնին դարաշրջանի՝ ինքն իր հետ ունեցած երկխոսությունն է, որի համապատկերում բացահայտվում են ժամանակի կենսական ռիթմերը:

Այն, ինչ արդիական է իր ժամանակին, արդիական է դառնում նաև հետագա ժամանակներում: Հասկանալու համար, թե այսօր ինչ է պետք՝ մեր առջև ծառայած բազում խնդիրներ լուծելու համար, անհրաժեշտ է գիտական և հետազոտական անդրադարձ կատարել ուսանելի օրինակներին: Այս համապատկերում իր ուրույն տեղն ու դերն ունի Վենետիկի Մխիթարյան միաբանության «Բազմավեպ» հանդեսը: Հիմնադրման ժամանակից (1843) մինչև օրս այն աչքի է ընկել ազգանվեր գործունեությամբ:

Լայն է հանդեսի ընդգրկված թեմատիկ շրջանակը՝ հայագիտություն, մատենագիտություն, ինքնուրույն և թարգմանական գրականություն, գրականագիտություն, պատմություն, ճարտարապետություն, արվեստաբանություն, լեզվաբանություն, քաղաքագիտություն,

¹ Стів Саламон Л., Всеобщая история прессы. Пер. с нем. Книгоиздательское Т-во “Улей”. С.-Петербург, 1909, URL:// http://www.evartist.narod.ru/text2/29.htm#3_03 (11.10.2011):

նույնիսկ ճշգրիտ գիտություններ և այլն: Ընդ որում, տասնյակ էջեր կարող են կազմել այն նվիրյալների անունները, որոնք խմբագրել, թարգմանել, աշխատակցել են հանդեսին:

Նոր հանդեսի ծնունդը ժամանակի հրամայականն էր: Աշխարհում արդեն մամուլի միջոցների առատություն էր, և կար դրանց դերի ու նշանակության կարևորման բավականաչափ փորձ: Հանդեսը լայն ասպարեզ էր բացում՝ զանազան խնդիրներ շոշափելու և դրանք զանգվածներին հասցնելու համար: Ուստի հայությունը ևս չէր կարող զերծ մնալ տեղեկատվական այնպիսի միջոցից, ինչպիսին մամուլն է, մանավանդ նոր տպարանների ու դպրանոցների ստեղծման համապատկերում, երբ ընդլայնվում էր ուսյալների ու ընթերցողների շրջանակը: Մխիթարյան միաբանության ազգանվեր գործունեությունը կարոտ էր տարածման ու լուսաբանման:

Դա մի ժամանակաշրջան էր, երբ առկա էին, մի կողմից, հռոմեական եկեղեցու խստապահանջությունն ու իշխելու հավակնոտությունը, ամեն կերպ օտարագրի քրիստոնյա ժողովուրդներին իր ազդեցության ոլորտում պահելու ցանկությունը, դրան միտված գործունեությունը, մյուս կողմից՝ աշխարհիկ խնդրումներն ու եվրոպական հեղափոխությունների պարբերական շրթան, պատերազմներն ու սոցիալական խնդիրները, ինչպես նաև աշխարհում սփռված հայության գոյատևման փորձությունները: Այս թոհուրոհի մեջ պահպանելով անհրաժեշտ զգուշավորություն՝ հանդեսը, սակայն, չէր կարող զերծ մնալ ճշմարիտ ու քննական դատողություններից, սեփական խոսքն արտահայտելու բնական իրավունքից: «Բազմավէպը» կարողանում է լուծել գոյատևման առաջնային խնդիրը՝ խոսքը հասցնելով ընթերցողին:

Տիրապետելով եվրոպական հին ու նոր մի շարք լեզուների՝ նոր ժամանակներում Մխիթարյաններն արեցին այն, ինչը համեմատելի է միայն հինգերորդ դարի թարգմանիչների սխրանքի հետ: Եվ եթե շարունակենք զուգահեռը, ապա պետք է ասել, որ եթե Ոսկեդարի թարգմանությունները հիմք դարձան հայ գրականության ու պատմագրության աննախադեպ թռիչքի, ապա Մխիթարյանների թարգմանությունները նախապատրաստեցին հայ նոր գրականությունը՝ առաջին կլասիցիստներից (Արսեն Բագրատունի և այլք) ու առաջին

ռոմանտիկներից (Գևորգ Ալիշան, Սկրտիչ Պեշիկթաշլյան) մինչև Դանիել Վարուժան ու Սիամանթո, Միսաք Մեծարենց ու Ռուբեն Սևակ: Եվ պատահական չէր, որ Միսաք Մեծարենցի հիմնադիր Մխիթար Մեքաստացու գործը հանդեսի հոբելյանական խմբագրականում համեմատվում էր Մեսրոպ Մաշտոցի գործունեության հետ. «...Երկու հանճարեղ դեմքեր են, անշուշտ, Մեսրոպ և Մխիթար, առաջինը հայկական գրի և կյանքին հիմնադիր, երկրորդը նույնին վերածնող հետ աղետի և տգիտության երկարատև շրջանի մը»²: Հանդեսի շուրջ համախմբվածները գիտակցում էին իրենց առջև ծառայած հիմնախնդիրների կարևորությունն ու արդիականությունը:

«Բազմավեպը» հրապարակման օրվանից մշակեց իր գործունեության ծավալը և ուղղությունը, առաջադրեց խնդիրներ ու նպատակներ, որոնք իրագործում էր հետևողականորեն՝ անկախ միմյանց փոխարինող խմբագիրների ճաշակից ու աշխարհայացքից: Այն ընդգրկում էր ոչ միայն ներագգային խնդիրներ, այլև արձագանքում էր համաշխարհային իրադարձություններին: Հիմնավորված էր հրապարակվելիք նյութերի դասակարգման և բաժինների բաշխման սկզբունքը: Կարևորվում էին ժամանակին տարածում գտած գիտությունների դերը, արդյունաբերության ու արհեստների, բնագիտության, երկրագործության, վաճառականության մասին նյութերի հրապարակումը: Հանդեսը գերակշիռ տեղ է հատկացրել պատմաբանասիրությանը, գրական գործերին, կրոնադավանաբանական հարցերին, կրթությանն ու լուսավորությանը, խրատաբանությանը, աշխարհիկ, ազգային խնդիրների լուսաբանմանը, գործնական նշանակության խնդիրներին:

«Բազմավեպի» կարևորագույն և արմատական խնդիրը լեզուն էր. այն ոչ միայն տարբերակիչն է ազգի, այլև նրա գոյության հիմնաքարը, առանց որի անհնար է որևէ ազգի զանազանումը մյուսներից: «Բազմավեպը» լավագույնս կիրառեց լեզվի հնարավորությունները թե՛ նյութերի մատուցման ու նպատակային առումներով, թե՛ հասարակության տարբեր շերտերին հասանելի լինելու տեսանկյունից: Այն օգտագործեց գրական հայերենի ժամանակային դրսևորումներ-

² «Բազմավեպ», Վենետիկ, 1947, թիվ 11-12:

րը՝ սկսած գրաբարից, արևմտահայ աշխարհաբարից, ներառելով նաև բանահյուսական տարրերը: Հանդեսը լույս էր տեսնում ոչ միայն հայերեն՝ ընդլայնելով հայ ընթերցողի աշխարհայացքն ու հարստացնելով գիտելիքները, այլև տրամադրում էր օտարալեզու նյութեր՝ ֆրանսերեն, իտալերեն, հունարեն՝ հնարավորություն ընձեռելով եվրոպացի գիտնականներին ծանոթանալու հայ ժողովրդի պատմությանն ու ազգային արժեքներին: Հանդեսի լեզվական քաղաքականության մեջ հատուկ տեղ էր զբաղեցնում քարգմանչական խնդիրը: Բնագրից անմիջականորեն արված քարգմանությունները, իհարկե, ապահովում են ոչ միայն հնարավորինս հարազատությունը բնագրին, այլև հարստացնում ու նոր որակ են ձևավորում: Լեզվի պահպանման, այն գործնական ու կիրառելի դարձնելու հանգամանքը խիստ կարևոր էր աշխարհասփյուռ հայության համար՝ ոչ միայն պահպանելու ինքնությունը ու այլև սեփական ներդրումն ունենալու եվրոպական մտքի ու հասարակական կյանքի մեջ:

Գալով հավատին՝ ազգի պահպանման մյուս գործոնին՝ նշենք, որ թեև Մխիթարյան միաբանությունը աշխարհում միակ կաթոլիկ հայ համայնքն է, այն երբեք չի լատինացվել: Ընդ որում, «Բազմավեպը», իր էջերում արծարծելով հոգևոր-մշակութային, դավանաբանական խնդիրներ, մշտապես ընդգծում էր հայրենասիրության գաղափարը:

Ուսումնասիրվող հիմնախնդրին վերաբերող նյութերի մյուս մասը գիտական հետազոտությունն է: Դրանցից առաջինները, թեկուզ ոչ լիարժեք գիտական, տպագրվել են դեռևս XIX դարի վերջերին և կազմում են հայ հոգևոր-մշակութային կյանքին նվիրված գրականության անքակտելի մասը: Մասնավորապես հիշատակելի են Հ. Գրիգորիս Վ. Գալենքարյանի, Գ. Լևոնյանի և Ս. Հովսեփյանցի աշխատությունները³:

Ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ գիտական գրականության մյուս մասն էլ ստեղծվել է արդեն XX դարում և XXI դարասկզբին: Այս շարքում հարկ է նշել Ա. Կարինյանի, Մ. Ճանաչեանի

³ Տե՛ս Հ. Գրիգորիս Վ. Գալենքարեան, Պատմութիւն հայ լրագրութեան, Վիեննա, Մխիթարյան տպարան, 1893, Գ. Լևոնյան, Հայ պարբերական մամուլը, Ալեքսանդրապոլ, 1895, Ս. Հովսեփյանց, Ընդհանուր ցանկ նյութոց ..., Վենետիկ, 1896:

աշխատությունները⁴: Հետաքրքիր է նաև «Հայ պարբերական մամուլի պատմություն, XVIII-XIX դարեր, հ. 1» աշխատությունը, ուր ընդարձակ հոդված է նվիրված «Բազմավեպի» կազմավորման և կայացման գործընթացին⁵:

«Բազմավեպի» վերաբերող բազմաթիվ խնդիրներ վերլուծվել են այլ աշխատություններում ևս: Այս առումով որոշակի ուշագրավ են Մ. Նալբանդյանի, Ա. Չոպանյանի, Գ. Աղայանի, Հ. Թումանյանի, Մ. Աբեղյանի, Հ. Օշականի, Ս. Սարինյանի, Ա. Խառատյանի և այլ հեղինակների աշխատությունները⁶:

«Բազմավեպի» մեծանուն ծանրակշիռ հանդեսի գործունեության ուսումնասիրությունն այսօր արդիական է բոլոր առումներով: Ուշարժան են ոչ միայն հանդեսի արժարժած խնդիրներն ու դրանց մատուցման եղանակները, այլև այն անձինք, որոնց ջանքերով կայացել է հանդեսը. նախ և առաջ՝ խմբագիրները, որոնք ուսյալ, բազմիմաց ու հայրենասեր գործիչներ էին, հեղինակները, որ նախանձախնդիր էին իրենց տողի ու մտքի հանդեպ, մարդիկ, որոնք մշակեցին հանդեսի սկզբունքներն ու հետևեցին նրան: Հակառակ դեպքում այժմ, երբ ազգային ինքնության և միասնության հիմնախնդիրը աննախընթաց կարևորություն է ստացել, «Բազմավեպ» դերակատարության վերաբերյալ արդիականության համապատկերում, կարծում ենք, հնարավորություն է տալիս հետևելու և գնահատելու արդի լրագրագիտական մի շարք հայեցակարգերի կայացման գործընթացը:

Ժամանակագրական ընդգրկումն անհրաժեշտ է դիտարկել «Բազմավեպ» հանդեսի զարգացման երեք շրջափուլերի համա-

⁴ Տե՛ս **Ա. Կարինյան**, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 2, Ե., Հայկական ՍՍՌ-ԳԱ հրատ., 1960, **Մ. Ճանաչեան**, «Բազմավեպի» յոթելեանը եւ անոր նշանակությունը, «Գեղունի», 1947:

⁵ Տե՛ս **Հայ պարբերական մամուլի պատմություն**, XVIII-XIX դարեր, հ. 1, Գահիրե, 2006:

⁶ Տե՛ս **Մ. Նալբանդյան**, Երկերի լիակատար ժողովածու, ԳԱ հրատ., 1980, **Ա. Չոպանյան**, Դեմքեր, Փարիզ, 1924, **Գ. Աղայան**, Երկերի ժողովածու, հ. 3, Ե., 1963, **Հ. Թումանյան**, Երկերի ժողովածու, հ. 4, Ե., 1959, **Մ. Աբեղյան**, Հայոց հին գրականության պատմություն, հ. 2, Ե., 1967, **Յ. Օշական**, Համապատկեր արևմտահայ գրականության, հ. 2, Երուսաղեմ, 1953, **Ս. Սարինյան**, Հայկական ռոմանտիզմ, Ե., ԳԱ հրատ., 1966, **Ա. Ա. Խառատյան**, Հասարակական միտքը Ջնյունիսիայի հայ պարբերական մամուլում (1840-1900), Ե., ՀՀ ԳԱԱ, «Գիտություն», 1995:

պատկերում: Այն է՝ 1843-1857 թթ., երբ այն եղել է գիտական, տնտեսական և բանասիրական երկշաբաթաթերթ՝ նպատակ ունենալով դյուրըմբռնելի աշխարհաբարով ընթերցողներին հասցնել լուսավորական գաղափարներ և օգտակար խորհուրդներ, ուղիներ նշել տնտեսական, քաղաքական և հոգևոր կյանքի վերածնման համար: Այս փուլում «Բազմավեպում» մեծ տեղ էին գրավում կրոնաբարոյախոսական հրապարակումները, գիտության և արդյունաբերության մարզերում նորագույն հայտնագործությունների, աշխարհագրական ու հնագիտական գյուտերի, բնության և ընդերքի հարստության մասին տեղեկություններ: Հաջորդ շրջափուլն ընդգրկում է 1858-1872 թթ., երբ այն վերափոխվել է ամսագրի ու աստիճանաբար սահմանափակել է բնական և տնտեսական գիտելիքներին հատկացվող էջերը՝ փոխարենը լայն ասպարեզ տալով գրական-գեղարվեստական նյութերին, համաշխարհային գրականության լավագույն էջերի թարգմանություններին: Եվ վերջապես, երրորդ շրջափուլը, որն ընդգրկում է 1872-1882 թթ., երբ «Բազմավեպը» վերածվել է եռամսյա ուսումնաթերթի («պրակ եռամսեայ»): Ավելացել են հայագիտական՝ «պատմական, բանասիրական, լեզվաբանական, տեղագրական, մատենագիտական ուսումնասիրությունները»⁷:

«Բազմավեպը» նշանակալից ավանդ ունեցավ ոչ միայն արտերկրի հայ մամուլի, այլև հայրենիքում լույս ընծայված պարբերականների կայացման գործընթացում: Հանդեսում շոշափված հայոց գրական լեզուների ու բարբառների, հայ հին ու միջնադարյան մատենագիտության, ազգագրության ու հնագիտության, արվեստի ու գրականության, թարգմանության, բժշկության ու տնտեսագիտության, ուսումնական, հայ նշանավոր գործիչների մասին նյութեր, հողվածներ ու մենագրություններ են տպագրվել «Հանդես ամսօրեայ» (Վիեննա), «Հայրենիք» (Բոստոն), «Հանդես հայագիտութեան» (Գերմանիա), «Հանդես մշակոյթի» (Ստամբուլ), «Բանբեր գրականութեան եւ արուեստի» (Ս. Պետերբուրգ) և այլ պարբերականներում:

⁷ ՀՄՀ, հ. 2, Երևան, 1976, էջ 216:

Դաս 2 (2 ժամ դասախոսություն)

«Բազմավեպի» ծնունդն ու ելակետային հիմնադրույթները

XIX դարի 40-ական թվականները նոր շրջան են բացում հայ պարբերական մամուլի, հատկապես գաղութահայ մամուլի պատմության մեջ: Ուստի այսօր դժվար է գերազնահատել այն դերը, որ վերապահված էր Մխիթարյան միաբանությանը: Բավական է միայն թերթել Մխիթարյանների կողմից հրատարակված բազմաթիվ աշխատությունների, հեղինակային և թարգմանական գրքերի, մեծածավալ դյուրամատչելի դասագրքերի, ինչպես նաև բազմաթիվ քարտեզների ու նկարների ցանկը, որպեսզի ականերև դառնան նրանց հրատարակչական գործունեության լայն տեսահորիզոնն ու դրա կարևորությունը⁸: Գարբիել արքեպիսկոպոս Այվազովսկու դիպուկ բնորոշմամբ՝ «եթե որևիցե գործ, և մանավանդ որ որևիցե կանոնադրության և ընկերակցության հարգն ու օգտակարությունը իր նպատակեն կչափվի, մի՞թե Մխիթարա և յուր միաբանությունը նպատակեն ավելի ազնիվ՝ գերազանց և օգտավետ բան կրնար ըլլալ: Ի՞նչ էր իր սկզբնական նպատակը, եթե ոչ լուսավորություն ազգիս Հայոց՝ մտավոր և բարոյական ու կրոնական կրթությամբ»⁹:

Հիմնադրման օրից Միաբանությունը եղել է հայագիտության ու կրթության համահայկական խոշոր կենտրոններից մեկը: Միաբանության կրթօջախներում (իսկ դրանք սփռված էին աշխարհով մեկ) ուսում են ստացել նշանավոր պատմաբան Միքայել Չամչյանը, ականավոր բանաստեղծ ու բանասեր, հայկական ռոմանտիզմի ռահվիրա Գևորգ Ալիշանը, պատմավիպասան Ծերենցը (Հովսեփ Ծիշմանյան), բազմաշնորհ բանաստեղծներ Սկրտիչ Պեշիկպաշյանն ու Դանիել Վարուժանը, արևմտահայ իրապաշտական դպրոցի հիմնադիրներից մեկը՝ արձակագիր և հասարակական գործիչ Արփիար

⁸ Տե՛ս Ա. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 2, Ե., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1960, էջ 16-17:

⁹ Գ. Այվազովսկի, Ուրուագիծ ոգու և ընթացից Մխիթարյան միաբանության, Փարիզ, 1857, էջ 15-16:

Արփիարյանը, աշխարհահռչակ դերասաններ Պետրոս Աղամյանն ու Վահրամ Փափագյանը և ուրիշներ: Ս. Ղազար կղզու միաբանների մոտ հայերենի իմացության իրենց առաջին փորձերն են արել Ջորջ Գորդոն Բայրոնը, պատմավիպասանության հիմնադիր Վալտեր Սքոթը, բանաստեղծ, թատերագիր Ալֆրեդ դը Մյուսեն:

Հիմնադիր Մխիթար Սեբաստացու շնորհիվ Մխիթարյան միաբանությունը գուցե թե աշխարհում միակ կաթոլիկ հայ համայնքն է, որ երբեք չի լատինացվել¹⁰, և կրոնական բոլոր ծեսերը կատարվել են միայն հայերենով ու հայ առաքելական եկեղեցու արարողակարգերով («Նոյնպես յամենայն կիրակէս տայր մատուցանել ձայնաւոր պատարագ ըստ արարողութեանց Հայաստանեայց եկեղեցւոյ»¹¹), մի բան, որ չէր կարող չմտահոգել Հռոմի պապին: Այնպես որ, վերջինս առիթի դեպքում մշտապես փորձում էր լատինաձես դարձնել Մխիթարյաններին (հիշենք Հռոմի անմիջական հովանավորությամբ ու աջակցությամբ ստեղծված, այսպես կոչված, Հասունյան շարժումը, որով պապն ուզում էր հակակշռել Ս. Ղազարի հայ միաբաններին)¹², սակայն այդպես էլ չէր հաջողում. «Շատ կախալի

¹⁰ Մխիթար Սեբաստացու մահվանից հետո Մխիթարյան միաբանությունը առաջնորդել են արքեպիսկոպոսներ *Սյրեփանոս Մելքոնյանը* (1750-1799), *Սյրեփանոս Ակոնցը* (1800-1824), *Սուքիաս Սունայեցին* (1824-1846, նրա օրոք է լույս տեսել «Բագմավէպը»), *Գևորգ Հյուրնյուզյանը* (1846-1876), *Իզնասրիոս Կյուրիեղյանը* (1876-1921): Ուշագրավ է, որ Կանոնադրության համաձայն՝ Մխիթարյան միաբանության անդամ կարող է դառնալ միմիայն հայազգի հոգևորականը: Ըստ այդմ՝ Միաբանության հիմնական նպատակներ են հռչակված հետևյալ դրույթները՝ ա) ուսուցանել և տարածել սուրբ Ավետարանի վարդապետությունը, բ) փրկել հավատացյալ հոտի հոգիները՝ հովվերգություններ կատարելով, գ) գոտ քրիստոնեական կրթություն տալ, դ) պահպանել քրիստոնեական դավանանքների միասնությունը՝ ըստ հիմնադիր Մխիթար Սեբաստացու էկունենիկ ուսմունքի: Միաբանության զինանշանին պատկերված է խաչակիր վահանը, որի վրա հայերեն տառերով գրված է «Որդեգիր Կուսի-Վարդապետ Ապաշխարության» նշանաբանը:

¹¹ Համառօտ նկարագիր Մխիթարեան միաբանութեան, Ի Վենետիկ, 1819, էջ 52:

¹² Շարժումն ստեղծվում է՝ հիմնվելով հայ կաթոլիկների կաթոլիկե պատրիարքարանի հոգևորականների վրա, Հայ կաթոլիկե պատրիարք Հասուն արքեպիսկոպոսի գլխավորությամբ: Հասունյանը նյութական աջակցություն էր ստանում Հռոմից տարեկան 25000 ռուբլում համարժեք գումարով (այս մասին տես **Ա. Ա. Խառատյան**, «Հասարակական միտքը Չմյուռնիայի հայ պարբերական մամուլում. 1840-1900» աշխատության, ինչպես նաև՝ Մատենադարան, Կաթոլիկոսական դիվան, թիթ. 214, վավ. 198):

ով որ կկարծես թե Մխիթարա նպատակն էր ազգերնիս կաթոլիկ ընել, ֆռանկացնել, լատինացնել. եթե այդ ըլլար, նոր միաբանություն մը կազմել ի՞նչ պետք էր այնքան նեղությամբ և հալածանք...»¹³:

Լինելով միանգամայն կազմակերպված կաթոլիկ միաբանություն՝ Մխիթարյանները նկատելի ավանդ են բերել հայ մշակույթի պատմության մեջ՝ հրապարակելով հայագիտական նշանակություն ունեցող սկզբնաղբյուրներ, բառարաններ, անտիկ գրականության թարգմանություններ, լեզվագիտական, աշխարհագրական, պատմական ուսումնասիրություններ: Այս ամենից բացի՝ ուշագրավ է, որ «Ազդարարից» հետո գաղութահայ պարբերականները, որոնցից են «Տարեգրությունը» և «Եղանակ Բյուզանդյանը» (Ղուկաս Ինճիճյանի խմբագրությամբ) լույս են տեսել դարձյալ շնորհիվ Մխիթարյանների: Դրանցից առաջինը նվիրված էր քաղաքական, եկեղեցական, մշակութային իրադարձությունների լուսաբանմանն ու նկարագրմանը: Հատկանշական է, որ խմբագիրն ուշի ուշով հետևում էր օրվա թեմաներին, հաշվի էր առնում աշխարհական և վաճառական ընթերցողների պահանջները, նկարագրում էր այդ ընթերցողներին հետաքրքրող դեպքերը¹⁴: Ընդհանուր առմամբ լինելով պարզունակ՝ այդ հանդեսը, սակայն, գրական-պատմական վավերագիր էր, որի տարածքում ընթերցողը հնարավորություն ուներ բավարարելու իր օրվա հետաքրքրություններն ու պահանջները: «Եղանակ Բյուզանդյանը» արդեն նոր տեսակի արմանախ-ժողովածու էր, որն իր խայտաբղետ և ֆանտաստիկ նյութերով փորձում էր ընթերցող լայն շրջանակներ գրավել: Ուշագրավն այն է, որ Ղուկաս Ինճիճյանն այս հանդեսի շրջանակներում աշխատում էր պարբերականն ազատել «էֆիմերտեներին» հատուկ թերություններից և մշակել հայերեն նոր ամսագրի բարեփոխված կառուցվածքը¹⁵: Եվ, որ կարևոր է, հանդեսն իր համարներում ընթերցողներին հորդորում էր սպառա-

¹³ **Այվազովսկի արք. Գ.**, Ուրուագիծ ոգոս և ընթացից Մխիթարյան միաբանության, Փարիզ, 1857, էջ 16:

¹⁴ **Կարինյան Ա. Ա.**, մշխ., հ. 2, էջ 106-107:

¹⁵ Նույն տեղում, էջ 126-127:

գինվել արևմտյան մշակույթի զենքերով և դրանք գործադրել անցյալի վերարժևորման գործում:

Գաղութահայ պարբերականների հիմնադրման պատմության մեջ Մխիթարյան միաբանության հաջորդ քայլը եղավ «Բազմավեպի» հիմնադրումը 1843 թվականին: Նոր հանդեսի գլխավոր առանձնահատկությունն այն էր, որ այն ստեղծվում էր՝ նախորդների փորձառությունը նկատի ունենալով: Հատկապես, երբ նույն Միաբանության կողմից հրատարակած «Տարեգրությունը», «Եղանակ Բյուզանդյանը» և «Դիտակ Բյուզանդյանը» հայ հասարակական-մշակութային կյանքում չկարողացան կատարել այն դերը, ինչն իրականացրեց «Բազմավեպը»: Հատկանշական է, որ պարբերականը, ձգտելով ստեղծել ընթերցող լայն զանգվածներին հասկանալի գրաբարագերծ լեզու (նկատի ունենալով նախորդների, մասնավորապես հնդկահայ «Ազդարարի» փորձառությունը), մինչ 1860-ական թվականները հիմնականում ավելի աշխարհիկ հակում ուներ և ավելի մոտ էր կանգնած հայ իրականությանը: Սիևնույն ժամանակ, սակայն, հանդես հրատարակելիս, անկախ միաբանների հոգևոր կայուն կողմնորոշումներից և կրոնական պատկերացումներից, ցանկության դեպքում անգամ հնարավոր չէր խուսափել հետհեղափոխական Եվրոպայի օրախնդիր մտայնություններից: Հատկապես, երբ 1870-ական թվականներին Հասունյան նենգ մտայնությունները մղում են Վատիկանին աչալրջորեն հետևելու Մխիթարյանների գործունեությանը¹⁶:

Անհանգիստ ու որոնող է դարաշրջանը, որում գործում էին Մխիթարյանները. «սոցիալական ու ազգային հեղաբեկումները ամենօրյա ցնցումներ էին բերում, դասակարգային արյունահեղ գոտենմարտերն ու ավերիչ պատերազմները ամենուր ցրում էին խաղաղավետ կյանքի երազանքները, և չգիտես թե ուր պիտի հանգրվանի մարդկությունը»¹⁷:

¹⁶ Տե՛ս **Ստեփանյան Գ. Խ.**, Լուսավորություն, գիտություն, մամուլ, Հայ ժողովրդի պատմություն, հ. V, Հայաստանի ՍՍՀ գիտ. ակադեմիայի հրատ., 1974, էջ 583-584:

¹⁷ **Սարինյան Ս.**, Հայկական ռոմանտիզմ, Ե., 1966, էջ 215:

Միաբանությունը կրոնական կազմակերպություն էր, և նրա առաջնորդները աչալրջորեն հետևում էին հանդեսի հրապարակումների բովանդակությանը, սակայն նոր իրողությունները իրենց հերթին հրամայական էին դարձնում հնօրյա պատկերացումների սրբագրումը՝ կապված հատկապես գիտության առաջընթացի հետ: Պետք չէ նաև անտեսել այն հանգամանքը, որ պարբերականը զանգվածային լրատվամիջոց էր և գործի բերումով կոչված էր իրացնելու իր առաջնահերթ գործառույթները, այն է՝ ընթերցող հանրությանը տեղյակ պահել աշխարհում ընթացող կարևոր իրադարձություններին, իրագրել դարձնել բնական և հումանիտար գիտությունների նվաճումներին, արվեստի և մշակույթի նորույթներին, հասարակական առավել կարևոր խնդիրներին և իրողություններին: Մանավանդ, սկսած XVII-XVIII դարերից, եվրոպական հումանիտար և գիտական միտքը կրթությունը այլ կերպ չէր պատկերացնում, քան մարդու բազմակողմանի զարգացումը, «ազատ արվեստների» և դասական լեզուների իմացությունը՝ ենթադրելով, որ «բառերը շատ ավելի վաղ են յուրացվում, քան գաղափարները»¹⁸:

Այս ամենը «Բազմավեպը» չէր կարող հաշվի չառնել: Հաշվի չէր կարող չառնել նաև այն, որ հայ նոր ընթերցողներին, որոնցից շատերը կրթություն էին ստանում եվրոպական առաջատար համալսարաններում, առաջին հերթին գրավում էին աշխարհիկ քեմաները, արևմտյան մշակույթի նորությունները, աշխարհագրական և բնագիտական նորագույն տեսությունները, գրական-հասարակագիտական ուղղությունները, և միայն կրոնադավանաբանական ակնարկները չէին կարող բավարարել նրանց, իսկ բողոքական ու լուսավորչական եկեղեցիների հետևորդների շարքերում դրանք կարող էին խանգարել հանդեսի տարածմանն ու ճանաչմանը:

Պարբերականի լուսավորչալ խմբագիրները չէին կարող նաև չնկատել, թե կաթոլիցիզմի մեջ նոր տիրույթներ նվաճող լիբերալ թղթ ինչ նշանակալի արդյունքների է հասնում մշակութային նորօրյա գործունեությանը: Հատկապես, երբ «բացահայտ ռեակցիոն հոսան-

¹⁸ **Моль А.**, Социодинамика культуры, М., «Прогресс», 1973, с. 37.

քը սկսել էր քայքայվել: Նույնիսկ չափավոր գործիչների շարժման մեջ 1843-1848 թվականներին ակնորոշ են դառնում բարենորոգչական ուրույն միտումները: Լիբերալ հրապարակագիրները հանդես են գալիս ավելի որոշակի կերպով ընդդեմ եզվիտության, ակնորոշ են դառնում և ուժեղանում հոգևորականության շարքերում հայրենասիրական տրամադրությունները»¹⁹:

Այնպես որ, հետևելով Միաբանության վերոհիշյալ նպատակներին (Ավետարանի վարդապետության ուսուցանում ու տարածում, քրիստոնեական կրթություն և այլն)՝ **«Բազմավէպը» ըստ կարեվույն, պեպք է որոներ ու գտներ քարոզչական նոր ուղիներ ու հանրային լսարանին գրավելու նոր մեթոդներ:** Ճիշտ է, հայ իրականության մեջ Մխիթարյանները կաթոլիցիզմի և իրենց իսկ հռչակած պատգամները կատարում էին սրբությամբ. քարգմանում ու հրատարակում էին դավանանքի դասականներին (Թովմա Աքվինացի, Թովմա Կեմպացի և այլն), նշանավոր սուրբ Հայրերի գրվածքները, սքոլաստիկական երկեր, հանդես գալիս Աստվածաշնչի նոր մեկնություններով, բայցևայնպես, հարկադրված էին համակերպվել հայ ընթերցողների հայաքքների ու պահանջների հետ: Այս հարթության մեջ անկարելի է անտեսել նաև մեկ այլ փաստ. ամերիկյան հայ միսիոներներն այդ ժամանակ արդեն հրատարակում էին «Շտեմարան պիտանի գիտելյաց» հանրամատչելի հանդեսը, որով ականա մարտահրավեր էին նետում կաթոլիցիզմի հայ ջատագովներին:

Հանդեսում աշխարհիկ մտայնությունների ներթափանցմանը նպաստում էին ոչ պակաս կարևոր այլ հանգամանքներ ևս: Նախ Իտալիայում, որտեղ գործում էր Միաբանությունը, XIX դարի 40-ականներին ուժգնանում էր ժողովրդական զանգվածների ընդվզումը: Հռոմի, Վենետիկի և Նեապոլի փողոցներում, հրապարակներում և ամենուր հնչում էին հայրենասիրական երգեր, որոնք ազատագրության և անկախության կոչեր էին անում: Ավելի վաղ Իտալիայում էր ապրել ու գործել ազատության մեծ երգիչը՝ Բայրոնը: Ինչպես վկայում են բազմաթիվ աղբյուրներ, բանաստեղծը կապված էր իտալացի

¹⁹ Կարինյան Ա. Ա., նշվ. աշխ., հ. 2, էջ 188:

ազատատենչ կարբոնարների հետ, եղել և հայերեն էր սովորել Ս. Ղազարի միաբանների մենաստանում:

Իտալական իրադարձությունները չէին կարող իրենց ազդեցությունը չբողնել նաև հայության վիճակի հետ համանմանության պատճառով, քանզի պատմական գործընթացի մասին փիլիսոփայական խորհրդածությունների անհրաժեշտությունը ծագում է այն ժամանակ, երբ խարխլվում են ազգի գոյության հիմքերը, ավանդույթները, խախտվում է զարգացման բնական ուղին, և երբ իրողություն է դառնում սեփական իդեալները կյանքի կոչելու անհնարինությունը: Հոգևոր, մշակութային, ապա նաև ֆիզիկական ոչնչացման վտանգի առջև կանգնած հայության համար Մխիթարյան միաբանները փորձում են ստեղծել ազգի ինքնապաշտպանության մի համակարգ, որն առաջնորդվում է հայոց պատմության վերափնաստավորմամբ: Այդ պարագայում ազատության հասնելու ուղիներից կարևորը ազատ ու անկախ ապրելու հիշողության վերաթնացումը պիտի լիներ, որին և լծվեց «Բազմավեպը» առաջին իսկ համարներից:

Պատ 3 (2 ժամ դասախոսություն)

«Բազմավեպի» խմբագրական քաղաքականությունը 1843-1880 թվականներին

1843-ից մինչև 1880 թվականը «Բազմավեպ» ունեցել է տասներկու խմբագիր՝ Գաբրիել Այվազովսկի (1843-1848), Ղևոնդ Ալիշան (1849-1851), Օբսիենտոս Գուրգենյան (1852-1853), Գրիգոր Դելալյան (1854-1856, այնուհետև՝ 1858-1861 և 1863-1866), Հմայակ Պապիկյան (1856-1861), Ա. Միոնիկ (1862-1866), Նորայր Բյուզանդացի (1867-1868), Ա. Գարթանյան (1868-1870), Հ. Իսավերտյանց (1871-1872), Կ. Իսկենտերյան (1873-1875), Ա. Սուքրյան (1875-1876), Ա. Բասթանդիլյան (1877-1882): Միաբանության առաջնորդները մշտադարձում հետևում էին հանդեսի խմբագիրների գործունեու-

թյանը, և միայն դրանով կարելի է բացատրել նրանց հաճախակի վիժվածությունը: Անշուշտ, յուրաքանչյուր խմբագիր իր նախասիրություններն ուներ, սակայն մի բան հաստատ էր և անվիժվող. ոչ ոք իրավունք չուներ խախտելու կանոնադրությամբ սահմանված օրենքները և օտար տարրեր մտցնելու կրոնական դավանանքի վարդապետության մեջ:

Հատկանշական է, որ «Բազմավեպի» առաջին խմբագիրներն ու աշխատակիցները «ջանացել են արձագանքել առաջին հերթին աշխարհիկ հայ ընթերցողների առաջնահերթ պահանջներին»²⁰: Միայն դրանով կարելի է բացատրել հանդեսի լեզվական քաղաքականությունը. ի տարբերություն ավելի վաղ հրատարակված պարբերականների՝ «Բազմավեպի» լեզուն «ռամկախառն» աշխարհաբարը չէ, այլ XIX դարի առաջին տասնամյակների արևմտահայ մտավորականության գործածած լեզուն, թեպետև այն դեռ ամբողջապես չէր կազմավորվել որպես գրական լեզու: Եվ դա հասկանալի է, քանի որ «լուսավորյալ» դարն ուներ իր խնդիրները, որոնք այլևս հնարավոր չէր ներկայացնել բառամթերքի և մտածողության այն որակով, որ ավանդված էր գրաբարով: Համենայն դեպս, կյանքի աշխարհիկացումը առաջադրում էր նոր պահանջներ:

Ունենալով հարուստ մատենագրություն, ինչը նրանց գործունեության ամենացայտուն կողմն է նրանք վերակենդանացնում և արժևորվում էին հայ ազգի հերոսական անցյալը: Հանդեսի խմբագրական քաղաքականության գաղափարական կարևորագույն սկզբունքներն են.

ա) ազգասիրությամբ և ազգանվեր գործունեությամբ ազգապահպանության կարևորագույն խնդիրը իրագործելը, որը հանդեսի խմբագիրների քաղաքականության ընդգծելի գիծն է,

բ) իրազեկել հայ ընթերցող հանրությանը աշխարհում և Եվրոպայում տեղի ունեցող բոլոր քաղաքական, սոցիալական, գիտական և տնտեսական տեղաշարժերի ու իրավիճակների մասին,

²⁰ Կարինյան Ա. Ա., նշվ. աշխ., հ. 2, էջ 186:

զ) պահպանել զգուշավորություն սուր քաղաքական խնդիրներ շոշափելիս:

Մխիթարյան միաբանությունը դեռևս 1842 թվականի աշնանից որոշել էր հաջորդ տարվա հունվարից «Բազմավեպ» անունով հանդես տպագրել, Մխիթարյան հայրերի արտահայտությամբ՝ «օրագիր կամ լրագիր ըսված գրվածքներ», սակայն ինչ-ինչ պատճառներով այն հետաձգվել էր մինչև մայիս²¹: Հանդեսի առաջին համարի ծանուցման մեջ ասված է. «Թեպետ սա օրագիրս Յունվարի առջի օրեն պիտի հրատարակվեր, բայց զանազան պատճառներով ինչվան հիմա ուշանալուն համար՝ Մայիսեն կսկսինք»²²: Այնուամենայնիվ, խմբագրությունը խոստանում է՝ «ինչվան տարեգրութի բոլոր տարվան 24 թերթն ալ կհանենք», և հավատարիմ խոստման՝ այդպես էլ վարվում է: Սա նշանակում է, որ այն պետք է լույս տեսներ ամիսը երկու անգամ: Այսպես, 1843 թվականից սկսվում է «Բազմավեպի» հրատարակումը՝ Գաբրիել Այվազովսկու խմբագրությամբ: Բավականին ծավալուն նախապատրաստական աշխատանքներ իրականացնելուց հետո «Բազմավեպը» հանդես է գալիս «մեծապես ճշգրտված ներքին քաղաքականությամբ»²³: Իսկ շուտով նաև իրականացնում հաջորդ վճռական քայլը. «հյուրասիրաբար» իր էջերում տեղ է հատկացնում հայ մտավորականության ամենատարբեր բնագավառի ներկայացուցիչներին, որոնք ոչ միայն Մխիթարյան միաբանության անդամ չէին, այլ նույնիսկ հոգևորական չէին, անգամ անդամակցում էին հակընդդեմ կրոնական որևէ կազմակերպության²⁴:

Պարբերականի «Բազմավեպ» անվամբ հրատարակիչներն ընդգծում էին իրենց որդեգրած քաղաքականության խորքային կապը Ինճիճյանի «Եղանակ Բյուզանդյան» հանդեսի ուղեգծի հետ,

²¹ Ավելորդ չենք համարում նաև նշել, որ «Բազմավեպի» գրեթե բոլոր նյութերը պատկերազարդված են գեղեցիկ նկարներով, որոնք կարող են ուսումնասիրության առանձին նյութ դառնալ:

²² «Բազմավեպ», 1843, Ա տարի, թիվ 1, էջ 6:

²³ Հայ պարբերական մամուլի պատմություն, XVIII-XIX դարեր, հ. 1, Գահիրե, 2006, էջ 68:

²⁴ Նույն տեղում:

որի երկրորդ վերնագիրը հենց «Բազմավեպ» էր²⁵: Հետաքրքրական է, որ նոր հանդեսի կառուցվածքը՝ կոմպոզիցիոն լուծումներով, ընդհանուր առմամբ չէր տարբերվում «Եղանակ Բյուզանդյանի» կառուցվածքից: Այսու՝ «Բազմավեպը» սկզբնապես պարագրկում էր հետևյալ երեք թեմատիկ համալիրները՝

1. «Բնական գիտություն»՝ «Աստղաբաշխություն», «Բնաբանություն», «Բնալուծություն», «Երկրաբանություն» և «Բնական պատմություն» բաժիններով,

2. «Տեսական գիտություն»՝ «Դաստիարակություն», «Քաղաքական տնտեսություն», «Երկրագիտություն», «Առողջություն», «Արուեստ» գյուտ բաժիններով,

3. «Բնական տեղեկություն»՝ «Պատմություն», «Աշխարհագրություն», «Ազգային տեղեկություն», «Բարոյական խրատ, պատմություն», «Բանաստեղծություն: Առակ» բաժիններով:

Իսկ արդեն 1849 թվականից, երբ Ղևոնդ Ալիշանն էր խմբագիրը, հանդեսը ենթարկվում է կառուցվածքային որոշակի փոփոխությունների: Այս անգամ այն արդեն բաղկացած էր հինգ խորագրից՝

1. «Բարոյական»՝ «Աշխարհադիտակ», «Յաղագս մարդկային պարտուց», «Դաստիարակություն», «Նկարագիր», «Բարոյական պատմություն: Առակ»,

2. «Բանասիրական տեղեկություն»՝ «Ազգային տեղեկություն», «Լուր և տես Հայաստանի», «Բանաստեղծություն», «Մատենագիտություն», «Աշխարհագրություն», «Հնախօսություն», «Պատմություն»,

3. «Տնտեսական գիտություն»՝ «Առողջութեան կանոններ», «Արուեստ և ճարտարություն», «Երկրագործություն և պարտիզպանություն»,

4. «Բնական գիտություն»՝ «Բնական պատմություն», «Բուսաբանություն», «Բնաբանություն», «Տոմարագիտություն», «Աստղաբաշխություն»,

5. «Մանր գիտելիք»:

²⁵ Հ. Գրիգորիս Վ. Գալենքարեան, Պատմություն հայ լրագրութեան, Վիեննա, Մխիթարյան տպարան, 1893, էջ 61:

Այսուհետ լրագիրը տասնամյակներ շարունակ պահպանում է բաժինների այս կառուցվածքը, իսկ կատարվող փոփոխությունները թելադրվում են ժամանակի պահանջներով:

Ընդհանուր առմամբ 1843-1880 թվականներին «Բազմավեպն» ունեցել է *փոխակերպման երեք շրջափուլ՝* 1843 և 1849 թթ., 1863 թ., 1873 թ.: *Առաջինը* (1843 և 1849 թթ.) կապված է, ինչպես վերն ասացինք, Գաբրիել Այվազովսկու և Ղևոնդ Ալիշանի, *երկրորդը՝* Գրիգոր Ճելալյանի, իսկ *երրորդը՝* Հ. Արսեն Սուքրիի անունների հետ:

Չարգացման *երկրորդ շրջափուլում* «Բազմավեպի» հիմնական ուղղվածությունը «նկատելիորեն» փոփոխվում է՝ ավելի հակվելով կրոնականությանը՝ ընդհանուր առմամբ, սակայն, նյութերի բազմազանությամբ մրցունակ մնալով ժամանակի աչքի ընկնող հանդեսների շրջանում: «Բազմավեպը» շարունակում է հիմնադիրների լավագույն ավանդույթները՝ զարգացնելով դյուրամատչելի լեզվի, տեղեկատվական բաժնի, աշխարհագրական ակնարկների և պատմաբանասիրական նյութերի, հայ հին ձեռագիր մատյաններից քաղված վավերագրերի, անգամ ռամկական երգերի, տնտեսական հետաքրքրությունները, արևմտյան մշակույթի ներկայացուցիչների մասին տեսությունների քաղաքականությունը: Այս ժամանակներից ակնհայտ է դառնում, որ «Բազմավեպի» խմբագիրների համար կարևոր նշանակություն են ձեռք բերում հայ առևտրականների հետաքրքրությունները արդյունաբերության, շուկայական հարաբերությունների և տնտեսական բնույթի այլ տեղեկատվությունը: Այսպես, աշխարհագրական ակնարկների և տեղեկատվական լուրերի թեմատիկան ավելի քան որոշակիորեն ցուցանում է «Բազմավեպի» հրատարակչական քաղաքականության փոխակերպությունը:

Արդեն *երրորդ շրջափուլում* ծրագրային փոփոխությունը խորքային բնույթ էր կրում. «Բնական գիտությանց բաժինը կնվազի. զարկ կը տրվի տեղագրական նյութերու», ինչպես նաև «թարգմանությամբ՝ դասական հեղինակներու»: Նման «ներքին շրջաբեկումը» նկատի ուներ Մ. Ճանաշյանը, երբ գրում էր. ««Բազմավեպի» կեանքին մեջ նոր շրջան մը կը բացուի 1873-ին, առաջ կու գայ զգալի յեղաշրջում մը նիւթերու ընտրութեան եւ դասաւորումի: Ամսաթերթը

կը փոխուի Եռանսեայ թերթի. կը սկսին ուսումնասիրուիլ նախնեաց կեանքն ու գործերը, կարթնանայ հնութեան սէրը համեմատ եւրոպական ազգերու յառաջադէմ հանդէսներու նկարագրին»²⁶: Նշենք, որ այս ժամանակ «Բազմավէպը» դառնում է եռամսյա թերթ՝ միևնույն ժամանակ փոփոխելով բովանդակային կառույցը, որն արդէն բաղկացած էր հիմնական վեց բաժիններից՝ **1. Հանդէս բարոյական, 2. Հանդէս հայկական, 3. Հանդէս բնական, 4. Հանդէս աշխարհագրական, 5. Հանդէս կենսագրական, 6. Հանդէս աշխարհագիտական**: Չնայած նման փոխակերպումներին՝ հանդէսը հիմնականում հավատարիմ է մնում այն սկզբունքներին ու ծրագրային դրույթներին, որոնք արծարծվում են «Բազմավէպի» առաջին տետրակի հատուկ նախաբանի մեջ (կատարվող փոփոխությունները ևս ժամանակի պահանջներով էին պայմանավորված): Նոր շրջանը բացող (1873 թ.) խմբագրականում գրված է. «Այս դասուն կը վերաբերի նաեւ մեր «Բազմավէպն» ալ, որ անցեալ տարւոյն ընթացիւք աւարտեց իր երեսնամեայ շրջանը: Արդեօք լուստոր շրջա՞ն էր կատարածը. առ այս մեզ այսչափ ի ճահ է ըսել թէ չծածկեց գլոյս. այլ եթէ չափաւորեց թերես երբեմն առ ի չխտտողել մտաց աչքերը, չափաւորեալ ըլլալով նաեւ ըստ սահմանի իւր ծրագրին, ըստ զանազան նկատմանց ժամանակին եւ իր ընթերցողացը, այժմ յետ երից տասանց ի չորրորդն միջամուխ ըլլալուն՝ մեծագոյն պարտք եւ պատիւ կը համարի իրեն եւ ազգին նորագոյն ջանիւք մտատրական լուսոյ բիւր ցոլմունքն ըստ կարելոյն բազմանիւք յօդուածուք կենդրոնացնել մտաց վառարաններուն վրայ. չթողլով կամ չկարենալով թողուլ ի բաց ըստ ամենայնի իւր բռնած ոճը, կը փափաքի *նոր ժամանակիս* լուսամիտ ուսումնաթերթերից ոճոյն ալ հետեւիլ իւրիք, եւ իբրեւ լաւագոյն թանգարան կամ հանդիսարան մ'ընել *հին եւ նոր* կարեւոր գիտելեաց, փայլուն երեւցնել ջանալով *ժամանակին* եւ *անցելոյն սրոյգ բարգաւաճանքը*»²⁷: Ընդհանուր առմամբ, «Բազմավէպի» թեմատիկական ձեռք է բերում արխայիկ բնույթ, իսկ նյութերի ընտրությունը, ակնարկների կառուց-

²⁶ Հ. Մեսրոպ Ծանաշեան, «Բազմավէպի» յոբելեանը եւ անոր նշանակությունը, Գեղումի, 1947, էջ 4:

²⁷ «Բազմավէպ», 1873, հ. ԼԱ, էջ 5:

վածքը, ինչպես նաև հանդեսի ամբողջ ուղղությունը բխեցվում էր կրոնականությունից:

«Բազմավէպը» առաջին իսկ համարի խմբագրականում ընթերցողների համար պարզաբանում է իր առջև դրված խնդիրները, լրագիր ստեղծելու հրամայականն ու նպատակները: «Երկու հարյուր տարիեն ավելի է, որ եվրոպացիք մեծ ջանքով ուսումնասիրության ետևէ կրլլան, ու նախանձելի կերպով մը օրե օր առաջ կերթան. գրքերուն, գրքատուններուն, թանգարաններուն, ընկերություններուն ու դպրոցներուն համրանքը չիկա. ամեն տարի ու գրեթէ ամեն օր նոր նոր գյուտեր կհնարվին, նոր նոր գիտելիքներ դուրս կելլեն, նոր նոր օգուտներ կհրատարակվին՝ մարդուս խելք սորվելու և իր քաղաքական կյանքը հանգստությամբ ու երջանկությամբ անցնելու համար»²⁸: Այս ամենի զարգացման պատճառներից մեկն էլ հանդեսը համարում է լրագրերի գոյության առատության փաստը ողջ Եվրոպայում: Հասարակական կյանքում մամուլի դերի ու նշանակության, նոր ժամանակների այսպիսի ըմբռնումն ու գիտակցումը այսուհետ դառնում են «Բազմավէպի» արծարծած խնդիրներից կարևորագույնները. «Այս գրվածքներուն մեծ օգուտը ան է, որ հասարակ ժողովուրդն ալ քիչ առենի մեջ ու առանց աշխատանքի, մանավանդ թե զվարճանալով կտորվի իմաստուն մարդիկներուն կամ ընկերություններուն գիտցածը ու մեջերնին խոսածը, որով ուսմունքը հասարակ բան մը կրլլա ամենուն, ու ամենքն ալ անոր պտուղները կվայելեն»²⁹: Իսկ արդեն 1844 թվականի խմբագրականում, վերարժևորելով նախորդ տարվա փորձը, Գ. Այվազովսկին գրում է. «Թէպէտ և ընդհանուր կարգն ու ոճը նոյն պահենք, բայց ամենայն կարելագործութիւնները ջանանք ընել, մանաւանդ ոճին պարզութեանը կողմանէ, որ աս տեսակ գրուածքի մեջ առաջին պահանուած յատկութիւնն է»:
Իսկ ապա նշվում է. «Կը բաղձայինք նաև լեզուն և ուղղագրութիւնը աւելի կանոնաւորել. բայց քանի որ աս մեր աշխարհաբառը հաստա-

²⁸ «Բազմավէպ», 1843, Ա տարի, թիվ 1, էջ 3:

²⁹ Նույն տեղում:

տուն քերականութիւնը մը չունի, մենք ալ հարկ համարեցանք մէկ քանի մանր վտփոխութիւններով միայն գոհ ըլլալ նաև աս տարի»³⁰:

Հենվելով եվրոպական մտքի ու հասարակական կյանքում մամուլի դերի ըմբռնման վրա՝ հանդեսի խմբագիրը կարծում է, որ հարկ է արևելյան ազգերի մեջ էլ «ձեռք առնել ուսումնասիրությունը՝ առաջ երթալու համար», որոնց մեջ «գլխավորներն են կն ու մեր ազգն է», որ ժամանակի թելադրանքով «մասնավոր ջանք մը ունի բարեկիրք և ուսումնական ազգերեն ետ չի մնալու»³¹: Առաջաբանի հեղինակին ուրախացնում է նաև այն հանգամանքը, որ օրեցօր կարդացող մարդիկ շատանում են, դպրատունները ծաղկում են, տպարաններ են բացվում, գրավոր լեզուն իմացողները ավելանում, մաքուր աշխարհաբար խոսողների թիվը մեծանում է, որոշ ուսումնական ընկերություններ են հաստատվում, այսինքն՝ կան բոլոր պայմանները ազգի լուսավորական զարգացմանը նպաստելու համար: Կա միայն մէկ խոչընդոտ. «Բայց մեր ազգին հիմնկական ուսումնասիրությանը նայելով, խիստ քիչ օրագիր ունենալը՝ ավելի աչքի կզարնե»³²:

Ուշագրավ է, որ նոր լրագիրը արժանին է մատուցում մինչև իր հրատարակվելը լույս տեսած հանդեսներին՝ ըստ այդմ հիմնավորելով իր՝ նոր լրագրի տեղն ու դերը հայ մամուլի համապատկերում: Հարգանքով է արտահայտվում հատկապես «Արշալույս Արարատյանի» մասին. «Կգովենք հիմնկական ազգասեր **Արշալույս Արարատյան** անունով օրագիրը, որ ազգասիրության և ուսումնասիրության հոգով կջանա լեցնել ազգը, ու մեծ պատիվ կընեն անոր վրա աշխատողին, և առ հասարակ ընդունելի եղած է ամենուն»: Նմանապես գնահատում է նաև «**Շտեմարան պիտանի գիտելվոց**»-ի տետրակները, միայն թե՝ «ասոնք ալ ազգին ուսումնասիրությունը կհայտնեն ու կվառեն, բայց ուսումնական հետաքրքրությունը չեն կշտացներ»³³:

«Բազմավէպը» գիտակցում է լրագիր հրապարակելու հասարակական պահանջի անհրաժեշտությունը, Եվրոպայում իշխող ու-

³⁰ «Բազմավէպ», 1844, Բ տարի, թիվ 1, էջ 4:

³¹ «Բազմավէպ», 1843, Ա տարի, թիվ 1, էջ 3-4:

³² Նույն տեղում, էջ 4:

³³ Նույն տեղում:

մունքների, արհեստների օգտակարության, ստույգ փորձով հաստատված գիտելիքների մասին ամեն տեսակ տեղեկատվություն հաղորդելու կարևորությունը:

Դաս 4 (2 ժամ դասախոսություն)

«Բազմավեպի» գնահատությունը հայ մամուլում

Արժևորելով հայ գաղթօջախների վրա «Բազմավեպի» ազդեցության խնդիրը՝ Ա. Ա. Խառատյանը գրում է. «Գաղթօջախի հոգևոր զարգացման վրա նշանակալի ազդեցություն էր թողնում Վենետիկի և Վիեննայի Մխիթարյանների գիտական ու մշակութային վաստակը: Նրանց հրատարակած բազմաթիվ պատմական ու բանասիրական աշխատությունները ընդլայնում էին ազգային զարթոնքի, կրթության ու լուսավորության սահմանները և նպաստում հայ գաղթօջախների մտավոր վերածնության գործին: Մխիթարյանները, որոնք ազգի բազմության հետ առնչվելու հենակետեր էին որոնում Կ. Պոլսի ամիրայության, ինչպես նաև Զմյուռնիայի առևտրականության մեջ, դեռևս XIX դարի առաջին տասնամյակներին պարբերականներ էին հրատարակում արևմտահայ աշխարհաբարով, որը խոր հետք էր թողնում օսմանյան Թուրքիայի հայ գաղթօջախների լեզվական ու գրական կողմնորոշումների վրա: Մասնավորապես, Մխիթարյանները տվեցին ժողովրդական խոսակցական լեզվի՝ արևմտահայ աշխարհաբարի գրական մշակման առաջին օրինակները, որոնք ամուր հիմք պետք է դառնային նոր գրական լեզվի հետագա մշակման ու զարգացման համար»³⁴:

Բնական է, որ Մխիթարյանների և նրանց գործունեության վերաբերյալ կարծիքները պետք է լինեին տարբեր՝ թե՛ դրական և թե՛ բացասական դիրքորոշումներով: Այս առումով ուշագրավ է Նալբանդյան-Այվազովսկի հակամարտության պատմությունը: Դեռ

³⁴ **Խառատյան Ա. Ա.**, Հասարակական միտքը Զմյուռնիայի հայ պարբերական մամուլում (1840-1900), Ե., ՀՀ ԳԱԱ, «Գիտություն», 1995, էջ 27-28:

Մ. Նալբանդյանի ժամանակներից սկսած՝ հայ պատմագրության և գրականագիտության մեջ տիրապետող մի կարծրատիպ կա, որով սովորաբար հակադրվում են միաբանության հիմնադիրն ու Մխիթարյանները: Մ. Նալբանդյանը մի անավարտ ուսումնասիրություն ունի, որ խորագրված է «Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանք», որտեղ, բարձր գնահատելով Մխիթար Սեբաստացուն, նրա նպատակներն ու իր առաջ դրած խնդիրները, քննադատության է ենթարկում միաբանության անդամների գործունեությունը³⁵: Իսկ մի այլ՝ «Կտոր մը Այվագովսիաբանություն» հոդվածում խստորեն քննադատում է Գաբրիել Այվագովսկուն: Անշուշտ, հասկանալի է Մ. Նալբանդյանի ազատական դիրքորոշումը, որով նա անհաշտ պայքար էր մղում կղերականության դեմ: Սակայն ժամանակն է վերաբժնորել այդ հայեցողությունը և հայ հասարակական կյանքում իրենց կատարած դերակատարությամբ վերստին գնահատության ենթարկել Նալբանդյանի աշխարհատեսության հակոտնյային՝ ազգային պահպանողականությանը՝ ի դեմս նաև Մխիթարյանների: Հետաքրքիրն այստեղ այն է, որ Մխիթար Սեբաստացուն Մխիթարյաններին հակադրող գնահատություններում Մ. Նալբանդյանի և Գ. Այվագովսկու դիրքորոշումները գրեթե նույնական են: Մի քանի զուգահեռ մեջբերումներով փորձենք հիմնավորել ասվածը: Այսպես, արժանին մատուցելով Մխիթար Սեբաստացուն՝ Նալբանդյանը գրում է «Մխիթարը ամենայն բան զոհեց հայոց ազգի լուսավորության համար, զոհեց մինչև անգամ յուր ազգային կրոնը, բայց դիտավորությամբ ենթարկվեցավ նա պապական լուծի տակ: Նորա ամեն մի քաջալերական խոսքերից, որ տալիս է յուր աշակերտներին, պարզ երևում է, որ ուներ նա յուր սրտի խորքում մի գաղտնի խորհուրդ՝ երբեմն թափել յուր անձը և միաբանությունը պապական իշխանության տակից և ուրանալ նորա իրավասությունը,³⁶ ապա շարունակում է. «Մխիթարը պապականությունը դրեց յուր երեսին որպես դիմակ, նորա ապագայքը ծնանում են արդեն դիմակով, բայց հայկական դիմակով: Մխիթարի արտաքինը-պապականությունը դառնում է նոցա համար

³⁵ Տե՛ս «Հյուսիսավայլ», Մոսկվա, 1858, թիվ 5-6 և 11:

³⁶ Նալբանդյան Մ., ԵԼԺ, հ. 2, էջ 274:

ներքին, Մխիթարի ներքինը... հայություն, դառնում է արտաքին, մի լոկ դիմակ, որով երևում են միմիայն հայոց ազգի առաջն»³⁷: Նույն խնդրի առնչությամբ ահա թե ինչ է գրում Գ. Այվազովսկին. «Մխիթար արքահայրն իր միաբանությանը համար պարզ և համառոտ կանոնադրություն մը շարադրած էր, և անով կառավարվեցան Մխիթարյանք բոլոր իր արքայության ժամանակը»³⁸: Այդ կանոնները հաստատվել էին Հռոմի պապի կողմից դեռևս 1712 թվականին, սակայն որպես «առժամանակյա սահմանադրություն»՝ կարոտ կատարելագործման և լրացման: Այդ կանոնադրությունը իր պարզությամբ ավելի հարմար էր արևելյան և հայկական «ողջամիտ» հոգուն, քան թե եվրոպական և առաջին հերթին հռոմեական «բազմակնճիռ քաղաքականության»³⁹: Ուստի Մխիթար Սեբաստացու հաջորդը՝ Ստեփանոս Մելքոնյանը, ստիպված եղավ սրբագրելու արքահոր սահմանադրությունը, լրացնելու և փոփոխելու, այնպես որ, «անով կաթուղիկության ոգուն ավելի հարմար ընթացքի մը մեջ մտնե Մխիթարյան միաբանությունը»⁴⁰:

Մ. Նալբանդյանի քննադատության առանցքը Մխիթարյանների՝ հենց այս ճիզվիտական սահմանադրությունը որդեգրելու հանգամանքն է: Նույնն է պարագան նաև Այվազովսկու գնահատությամբ: Ավելին, նա այդ հարցում ավելի անողորք է, քան ազատական Նալբանդյանը: «Թե որ երկու հարյուր տարիե մը ի վեր Եվրոպայի մեջ ճիզվիթ ըսելը համագոր է կեղծավոր, բանասարկու, ստախոս և փարիսեցի ըսելուն, հայտնի բան է, որ այն ճիզվիթության հիմը իրենց սահմանադրությունն է. և որչափ որ մեկը այն սահմանադրությունը ճիշդ պահե՝ այնչափ ավելի ճիզվիթ է... Մխիթարյանց սահմանադրությունն ալ ճիզվիթներուն սահմանադրության գրեթե բառական թարգմանությունն է»⁴¹: Իսկ սա, ըստ Այվազովսկու, մշանա-

³⁷ Նալբանդյան Մ., ԵԼԺ, հ. 2, էջ 276:

³⁸ Այվազովսկի արք. Գ., Ուրուագիծ ոգու և ընթացից Մխիթարյան միաբանության, Փարիզ, 1857, էջ 72: Այստեղ հարկ ենք համարում նշել, որ այս աշխատությունը նա գրել է եղբոր՝ աշխարհահռչակ նկարիչ Հովհաննես Այվազովսկու խնդրանքով:

³⁹ Նույն տեղում:

⁴⁰ Նույն տեղում, էջ 73:

⁴¹ Նույն տեղում, էջ 74-75:

կում է, որ հանձինս Մխիթարյանների՝ մենք գործ ունենք հայ ճիզվիտների հետ: «Եվ մենք այնպիսի անձինք տեսեր ենք դժբախտությամբ վանքին մեջ որ ոչ միայն վարութ ճիզվիթ էին, այլև ճիզվիթ ըսվելը իրենց մեծ պարծանք կհամարեին»⁴², – ցավով նշում է շուրջ 30 տարի միաբանության անդամ եղած արքեպիսկոպոսը: Այնուամենայնիվ, Գ. Այվազովսկու համար պարզ է նաև, որ Միաբանության անդամների մեջ կան անձինք, որոնց համար «...այն սահմանադրությունը ոչ երբեք ընդունելի եղած է ամենայն Մխիթարյանց առ հասարակ. ուստի և միշտ փափաքելի եղեր է իրենց որ փոխվի ու սրբագրվի, և միաբանությանն ու ազգիս այժմու պիտոյիցը հարմարցվի»⁴³, – գրում է նա: Ծիշտ է և այն, որ ճիզվիտական սահմանադրության դեմ շատ անգամներ ընդվզումներ են եղել, որոնցից մեկի մասին պատմում է ինքը՝ Այվազովսկին: «Երբոր 1846-ին ընդհանուր ժողով ըրավ Միաբանությունը նոր մեծավոր ընտրելու համար, ու այս խնդիրը մեջ բերվեցավ գորավոր փաստերով՝ պահանջելով, որ մեծավորին ընտրութենեն առաջ սահմանադրությունը սրբագրվի, քանի մը հոգու հնարքովը որոշվեցավ, որ այն խորհուրդը նոր մեծավորին ընտրութենեն ետքը ձգվի»⁴⁴ : Սակայն տասը տարի անց խնդիրը դեռևս մնում է չլուծված, և արդեն Միաբանության հետ գժտված և հեռացած Այվազովսկուն մնում է ընդամենը խորհուրդ տալ նրանց. «Իսկ եթե հանկարծ բարեմիտ Մխիթարյանց ոմանց ակնկալությունը կատարվելով երբևիցե ընդհանուր ժողովը գումարվի, խորհուրդ կուտանք իրենց կարեկցաբար, որ այն առթով ոչ միայն հռովմեական դիմակը մեկդի ձգեն, այլև այն ճիզվիթական սահմանադրությունը, այն կեղծավորության խմորը»⁴⁵: Իսկ այդ «կեղծավորության խմորը», ըստ Այվազովսկու, գալիս է «անուղիղ» դաստիարակությունից: «Դեռահասակ աշակերտաց տրված կրթությունը մեկեն հայտնի կընե թե Միաբանության հոգին ի՛նչ է, և հոն մտնել ուզողին ի՛նչ տեսակ գաղափարներ և ի՛նչ վարմունք կպա-

⁴² **Այվազովսկի արք. Գ.**, նշվ. աշխ., էջ 75:

⁴³ Նույն տեղում, էջ 75-76:

⁴⁴ Նույն տեղում, էջ 76:

⁴⁵ Նույն տեղում, էջ 77-78:

հանջվի»⁴⁶,– գրում է նա: Վանքի նորընծայարան մտնող տասր-տասնչորս տարեկան պատանիներին այստեղ սպասում են խստա-կյաց կյանք ու դառնություններ, երբ «վարդապետ ըլլալու փափաքը սրտին մեջ կթաղե», իսկ հայրենիք վերադառնալու հույսը կամաց-կամաց կմարի, և «տղուն վրա կարգե դուրս հանդարտություն կամ թե ըսեմ թմրածություն ու վախկոտություն մը կուգա... Եվ այն կըլլա փարիսական խմորին տղուն սրտին մեջ բռնած ըլլալուն առաջին նշան, և հետզհետե առաջ կերթա խմորումը մինչև որ բոլոր զանգվա-ծը կեղծավորության խմորովը թթվի՝ նաև հետագա ճամբանե-րով»⁴⁷,– նկատում է Այվազովսկին: Այս բոլորից գատ, ըստ վերոհի-շյալ սահմանադրության, ուսանողները, այնուհետև նորընծա քահա-նաները շուրջ տասր-տասներկու տարի «իրենց վերակացունեն ու դա-սատունեն ի գատ ուրիշ մարդու հետ պիտի չխոսին նույնիսկ վանքին մեջ», այդ պատճառով շատերը հաճախ «թմրած, խրտան ու մար-դատյաց բնություն մը կստանան»⁴⁸: Ի դեպ, կաթովիկ խստակյաց կրթության մասին հրաշալի է գրել Ջեյմս Ջոյսն իր «Արվեստագետի դիմանկարը պատանության հասակում» վեպում⁴⁹: Այս ամենի հե-տևանքը լինում է կույր հնազանդությունը: Կամավոր հնազանդու-թյունը քրիստոնեական պարտք է և գեղեցիկ առաքինություն, առանց որոնց ո՛չ մարդկային ընկերություն կլինի, ո՛չ միաբանություն և ո՛չ էլ կարգ ու կանոն կպահպանվի, սակայն կույր հնազանդությու-նը, որով դաստիարակվում են Մխիթարյան միաբանության ուսա-նողները, նրանց դարձնում է «անբան անասուններ», որպեսզի «ճիգ-վիթ մեծավորը ...իր բարի ու չար հաճոյիցն ու խելքին փչածին ծա-ռայեցնե զանոնք առանց դժվարության»⁵⁰,– գրում է Այվազովսկին: Մի բան, որ հակառակ է աստվածային և մարդկային օրենքներին,

⁴⁶ **Այվազովսկի արք. Գ.**, նշվ. աշխ., էջ 80:

⁴⁷ Նույն տեղում, էջ 84-85:

⁴⁸ Նույն տեղում, էջ 95-96:

⁴⁹ Տե՛ս **Ջեյմս Ջոյս**, Արվեստագետի դիմանկարը պատանության հասակում (Թարգմ. անգլերենից և ծանոթագրությունները՝ Հ. Շարտրյանի), Երևան, «Անտարես» հրատ., 2018:

⁵⁰ **Այվազովսկի արք. Գ.**, նշվ. աշխ., էջ 104:

հավասարապես անընդունելի՝ մարդկության և քրիստոնեության համար:

Մ. Նալբանդյան-Մխիթարյաններ ընդդիմության առիթով քննենք ևս մի դրույթ: Ողջ XIX-XX դարերում հայ քննադատական միտքը գրեթե անառարկելի է համարել հայ կղերականության «տգիտության» իրողությունը: Այսպես, «... մինչև այսօրս չէ երևեցած դոցա մեջ մի ուսումնական անձն, եվրոպական բազմակողմանի և տիեզերական կրթությամբ. դոցա գիտությունքը այս և այն ուսման ճյուղի մեջ են էնցիկլոպեդիկական հատ ու կոտոր տեղեկություն. իսկ կապակից ուսումն ամենևին եվրոպական կարգով, եվրոպական հայացքով չէր կարող. այո՛, ոտքի տեղ գտանել մի այնպիսի դպրոցում, կամ մի այնպիսի ընկերության մեջ...»⁵¹,– առարկություն չընդունող տոնով, վստահաբար պնդում է Մ. Նալբանդյանը: Կարծում ենք՝ այս հարցում նա իրավացի չէ, որովհետև, սկսած XVII-XVIII դարերից, եվրոպական հումանիտար և գիտական միտքը կրթությունը այլ կերպ չէր պատկերացնում, քան մարդու բազմակողմանի զարգացումը, «ազատ արվեստների» և դասական լեզուների իմացությունը»⁵²: Իսկ բազմակողմանի զարգացած, մանավանդ դասական լեզուների իմացության հարցում ցայսօր հայ իրականության մեջ Մխիթարյան միաբաններից ոմանք մրցակից չունեն, և որպես «ուսումնական անձն»՝ Ղևոնդ Ալիշանը այն եզակիներից է, որ հայագիտական միտքը պահում էր ժամանակի եվրոպական հումանիտար գիտության բարձրության վրա: Այլ բան է, որ նրանք չունեին կամ բնավ չէին ցանկանում ունենալ «եվրոպական կարգով, եվրոպական հայացք» հատկապես այն խնդիրների վերաբերյալ, որոնք վերաբերում էին քաղաքականությանը և աշխարհիկ այլ արժեքներին:

Գրական վերաբերմունքն ու վերագնահատություններն արդեն հստակորեն կձևակերպվեն մեկ դար անց: Այսպես, 1947 թվականին հանդեսի հարյուրամյա հոբելյանի առիթով ասված խոսքում (տոնակատարությունը պետք է նշվեր 1943-ին, սակայն համաշխարհային պատերազմի պատճառով տեղափոխվել էր) ամփոփելով անցած

⁵¹ Այվազովսկի արք. Գ., նշվ. աշխ., էջ 272:

⁵² Моль А., Социодинамика культуры, М., «Прогресс», 1973, с. 37.

ուղին՝ հանդեսը խմբագրականում գրում է. «Անտարակույս հայ ազգին համար բոլորովին բացառիկ եղելություն մը էր տոնել իր թերթերու Նահապետին հարյուրամյա հոբելյանը, որուն առջև անվերապահորեն կխոնարհի ուրիշ որևէ գրական ձեռնարկ: Փոխադրելով այս բացառիկ երևույթը եվրոպական և կամ միջազգային սահմաններու մեջ, «Բազմավեպ» դարձյալ իր պատկառելի հասակովը պարծանքի առարկա կհանդիսանա օտար կարգ մը արևմտյան և արևելյան ազգերու առջև, որոնք մեզմե թվով և կյանքի լավագույն պայմաններով նպաստավորված ըլլալով հանդերձ՝ չունին գրական աշխարհի դիմաց՝ իրենց հրապարակագրական գործունեության այսքան երկարամյա ներկայացուցիչ մը»⁵³: Վերագնահատելով լրագրի հարյուրամյա անցած ճանապարհը և Միաբանության հիմնադրի՝ Մխիթար Մեբաստացու կատարած գործը՝ հանդեսի խմբագրականը վերջինիս համեմատում է Օշականի մեծ սրբի՝ Մեսրոպ Մաշտոցի գործունեության հետ՝ գրելով. «Նոր հորիզոն մը կբացվեր այն օրը, երբ Օշականի մեծ Սուրբը հաղթական՝ գիրերու տախտակները ձեռքը՝ կկոխեր Հայաստանին հողին վրա, ու ազգը իր բովանդակ զանգվածով կզգար ինքզինքը այլևս տերը իր երկրին և ազգային սխրալի ավանդություններուն... Երկու հանճարեղ դեմքեր են անշուշտ Մեսրոպ և Մխիթար, առաջինը հայկական գրի և կյանքին հիմնադիր, երկրորդը նույնին վերածնող հետ աղետի և տգիտության երկարատև շրջանի մը»⁵⁴:

Ինչպես XIX դարի վերջին, այնպես էլ XX դարում «Բազմավեպի»՝ իբրև նոր բովանդակության հանդեսի սկզբունքները հոգեհարազատ էին հայ լրագրերից շատերին: Հարկավ, նրանք անվերապահ ընդօրինակողներ չէին և ստեղծագործաբար էին մոտենում «Բազմավեպի» ժառանգած դրույթներին:

1943-ին, այսինքն՝ «Բազմավեպի» ճիշտ հարյուրամյակի ժամանակ, սփյուռքյան «Ռազմիկ» թերթը գրում է. «Հայ դժբախտ իրականության մեջ բացառիկ երևույթ մըն է, որ հանդես մը հարյուր տարի կյանք ունենա և միշտ պատմեշի վրա մնա: Մենք կտեսնենք հա-

⁵³ «Բազմավեպ», 1947, թիվ 11-12:

⁵⁴ Նույն տեղում:

ճախ քիթեռնիկի մը կյանք ունեցող թերթեր և հանդեսներ, որոնք մեծ ծրագիրներով հրապարակ կիջնեն, բայց քներնին խանձած դառն իրականության բոցերեն, շուտով կկծկվին ու կչքանան»⁵⁵: Թերթը ափսոսում է, որ «Բազմավեպի» հարյուրամյակը գուգաղիպեց պատերազմի ահեղ օրերին և հնարավորություն չտվեց պանծացնելու ալեհեր նահապետին, բայց դա չի կարող հանդեսի վաստակին պատշաճը չմատուցելու պատճառ լինել: «Հարյուր տարի անվիաստ ու անխոնջ ակոսեց ան հայ մտքի անդաստանը, լուսավորեց խավար ու մշուշապատ ճամբաները... թև ու թռիչք տվավ շրթայված հայ հոգիներուն, և դարերի ստրկության մեջ խարխափող, իր անցյալի մեծության անգետ հայը վերստեղծեց, անոր ցույց տալով իր պապերու ստեղծագործություններն ու արժանիքները»⁵⁶, – գրում է թերթը:

Իսկ Բունոս Այրեսում հրատարակվող «Շարժում» շաբաթաթերթը իր 1947 թ. ապրիլի 26-ի համարում գրում է. «Մեր ազգային մշակույթի գլխավոր վառարանը եղող Վենետիկի պաշտոնաթերթի բեղմնավոր հարյուրամյակը եզակի դեպքն մըն է մեր պատմության մեջ, որը... գրեր, պրպտեր, մշակեր ու զարգացուցեր է թե մեր լեզուն, թե մեր միտքը և թե ազգային մեր զգացումը, դնելով հայկական հարազատ ու մաքուր դրոշմը վերագարթնող սերունդի մեջ... Հայ գրի, գրականության, բանաստեղծության ու բանասիրության հետ Վենետիկը հայկական հարազատ շունչի ու ըմբռնումի աղբյուրը եղած է, այն մռայլ օրերուն իսկ, երբ Թուրքիո լուծին տակ ապրող հայ ժողովուրդին պարտադրված էր լռել ու հայերեն չերգել»⁵⁷:

«Բազմավեպի»՝ հայոց արևմտահայ գրական լեզվի շինարարի դերը բարձր է գնահատում նաև բազմամյա «Մասիսը»: «Փառավորել «Բազմավեպը» կնշանակե փառավորել հայ միտքը, հայ սիրտը, հայ հոգին: «Բազմավեպի» ուղղված ամեն դրվատիք, ուղղված է հայ մեծասքանչ լեզվին, որ շնորհիվ այս հանդիսարանին՝ մեծապայծառ կերպով բացահայտեց ինքզինք, օտար երկնքի տակ,

⁵⁵ «Ռազմիկ», 1943, թիվ 5:

⁵⁶ Նույն տեղում:

⁵⁷ «Շարժում», 26 ապրիլի, 1947:

կյանք տվավ անցյալին, լուսավորեց ներկան, ու դեպի ապագան ահա՛ կհառե իր աչքերը»⁵⁸, – գրում է թերթը:

«Բազմավեպի» գործունեությունը սխրանք է համարում Կ. Պոլսում լույս տեսնող «Մարմարան»: «Որքա՛ն հզոր է հայ մշակույթը մանավանդ այդ կապույտ կղզիին մեջ... Հերոսություն մըն է կռվիլ կյանքին դեմ և արհամարհել ճակատագրին բոլոր դավերը, բայց իսկական դյուցազնություն է հայ ծնիլ և մտքի ճամբով մղել գոյության ամենօրյա պայքարը», – գրում է լրագիրը: Բոլորին չէ, որ հաջողվում է ընթանալ այդպիսի լուսավոր ճամփաներով, զանց առնել հայությանը վիճակված դառը բախտը և «...ճակատաբաց ներկայանալ պատմության... Եվ դուք երջանիկ եք... քանի որ ավանդության կհանճնեք մշակույթի զանճարան մը, ուր տեղ ունին մեր մատենագրությունն ու բանասիրությունը, սրբազան դպրությունը, լեզուն և քաղաքակրթական նվաճումները... դուք մեկն եք անոնցմե, որ խնայած են մեր ժողովուրդին այս ահավոր պարտությունը և զայն տարած երջանկության մը, որ սերունդե սերունդ կփոխանցվի անվթար»⁵⁹, – գրում է հեղինակավոր պարբերականը:

Դաս 5-6 (4 ժամ սեմինար պարապմունք)

Սեմինար 1

Զննարկվող հարցեր

1. «Բազմավեպի» ստեղծման նախադրյալները:
2. Կրթության և հայագիտության հիմնախնդիրները «Բազմավեպի» ուշադրության կենտրոնում:

Սեմինար 2

Զննարկվող հարցեր

1. Բազմավեպի խմբագիրների մշակութային քաղաքականությունը:

⁵⁸ «Մասիս», Բեյրութ, 27 օգոստոսի, 1947:

⁵⁹ «Մարմարա», Կ. Պոլիս, 19 հոկտեմբերի, 1947:

2. Ամսագրի թեմատիկ լայն ընդգրկումը (բանասիրական, բարոյական, բնական, տնտեսական գիտելիքների և այլն):

3. Ժամանակի հայ մշակութային գործիչները «Բազմավեպի» և նրա գործունեության ուղղությունների մասին:

Դաս 7 (2 ժամ դասախոսություն)

Հոգևոր-մշակութային և ազգային կյանքի հիմնախնդիրները «Բազմավեպ» հանդեսում. Հոգևոր մշակույթի ըմբռնումը

«Բազմավեպի» հատորները կարևոր արժեք են ներկայացնում հայ հոգևոր մշակույթի ըմբռնման համար: Հարկավ, մշակութաստեղծման գործընթացը նոր որակներ էր ստացել անտիկ և եվրոպական գրական կոթողային երկերի թարգմանության և դրանք հայկական միջավայրում վերարժևորելու շնորհիվ: Իսկ ընդհանուր առմամբ «Բազմավեպի» առանձնահատկությունն այս առումով կրկին նրա՝ գաղթաշխարհի իրականության ներկայացուցիչը լինելու մեջ էր: Ինչպես նշում է Հ. Թումանյանը, «Հայ գրականությունը կարելի է երկուսի բաժանել՝ բնաշխարհիկ և տարաշխարհիկ, առաջինն այն է, որ ծնվում և սնվում է մայրենի հողի վրա, մայրենի միջավայրում: Երկրորդն այն է, որ կտրված հայրենիքից զարգանում է օտար երկնքի տակ՝ հայ գաղութներում. նկատվել է, որ այդ վերջինները հայրենասիրության միշտ մեծ կորով են երևան բերում, օրինակ՝ Ալիշանը»⁶⁰:

Հիրավի, Մխիթարյան միաբանությունը գաղթօջախներում գործող հայ հոգևոր-մշակութային, «տարաշխարհիկ» կենտրոններից մեկի փառավոր դրսևորումն է: Եվ դա է՛լ ավելի արժևորելի է, որովհետև միաբանությունը, ի վերջո, հոգևոր-կրոնական, իր տեսակի մեջ եզակի կազմակերպություն էր, սակայն հանգամանքների բերումով մեծագույն ծառայություններ մատուցեց նաև «աշխարհիկ մշակույ-

⁶⁰ Թումանյան Հ., Երկերի ժողովածու, հ. 4, Ե., 1959, էջ 12:

քին»՝ ուղեցույց լինելով կյանքի ամենաբազմազան ոլորտների (գրականության, հայագիտության, պատմագրության, աշխարհագրության, երկրագործության և այլն) համար: Դյուրին չէր այդ խնդիրը, մանավանդ եթե հաշվի առնենք, որ միաբանությունը կրոնական կազմակերպություն էր և ամենևին կարիք չուներ դրսևորվելու զանազան «խորթ» բնագավառներում:

Սկսած վաղ քրիստոնեական շրջանից՝ մշակույթ-կրոն հարաբերությունների պարզաբանման խնդիրը մշտապես եղել է քննության առարկա: Քրիստոնյա առաջին մտածողները միաժամանակ իրենց ժամանակի ամենագարգացած մարդիկ էին, հասարակության այն խավը, որ ժամանակակից ըմբռնմամբ կոչվում է մտավորականություն: Վիճակն այդպես էր նաև հայ իրականության մեջ: Ոսկեդարի մեր բոլոր խոշոր մտածողները (Խորենացի, Եղիշե, Կորյուն, Փարպեցի և այլն) հոգևորականներ էին, մի հանգամանք, որ չնչին բացառություններով պահպանվեց ողջ միջնադարում և մինչև նոր ժամանակները: Այսինքն, եթե մենք խոսում ենք հայ հին և միջնադարյան մշակույթի մասին ամենալայն սահմանմամբ (մանավանդ պետականության կորստից հետո), կարող ենք արձանագրել, որ մեծ մասամբ գործ ունենք վանական մշակույթի հետ: Եվ դա միանգամայն բնական է, որովհետև, ինչպես գրում է մեր ժամանակների բողոքական աստվածաբան Ռ. Նիբուրը, «անհնար է լինել միայն քրիստոնյա՝ ոչ մի առնչություն չունենալով մշակույթի հետ, քանի որ հավատը պետք է արտահայտվի լեզվի, բառերի, համամարդկային մշակույթից եկող գաղափարների օգնությամբ»⁶¹: Իհարկե, այդ դեպքում անմիջապես առաջանում է լեզվի, բառերի և գաղափարների «մաքրության» հարցը, և այստեղ կարող են լինել լիբերալ կամ արմատական ծայրահեղ մեկնաբանություններ: Ռիչարդ Նիբուրը մասնավորապես ուշադրություն է հրավիրում մշակույթի նկատմամբ եկեղեցու երկակի վերաբերմունքի վրա: «Այդ արմատական քրիստոնյաներն են, որոնց համար արտաքին աշխարհը խավարի թագավորություն է: Նրանց հատուկ է մշակույթի՝ որպես գայթակղության,

⁶¹ **Ричард Небур и Райнхольд Небур**, Избранные труды. Христос и культура, М., «Юрист», 1996, с. 541.

կռապաշտության, եսասիրության և նյութապաշտության տոտալ մերժումը... Հակառակ կողմը ներկայացնում են «մշակութային քրիստոնյաները», որոնք տեղի են տալիս բոլորի կողմից ընդունելի բարքերի ճնշման տակ»: Սակայն «քրիստոնյաների ճնշող մեծամասնությունը, որը կարելի է կոչել եկեղեցական կենտրոնամիտություն, հրաժարվում է բռնել ինչպես մշակույթի նկատմամբ արմատական դիրքորոշում ունեցողների, այնպես էլ նրանց կողմը, ովքեր Քրիստոսին հարմարեցնում են մշակույթին»⁶²: Խորհելով եկեղեցու և մշակույթի համատեղելիության խնդրի մասին՝ Նիբուրը մասնավորապես նկատում է. «Այս աշխարհից չլինելու» Քրիստոսի հատկությունը Նրա մեջ մշտապես հյուսվում է այս աշխարհի մասին հոգ տանելու հետ. Նրա կոչը և Նրա մեջ երևան եկած աստվածային գործությունը անբաժանելի են մարդկանց *այսպես* և *հիմա* գործուն լինելու պատվիրաններից»⁶³:

Մխիթարյան միաբանության, մասնավորապես «Բագմավեպի» պարագայում հարկ է ընդգծել նրանց կաթոլիկ լինելու հանգամանքը: Այդ դեպքում խնդիրը փոքր-ինչ հեշտանում է, որովհետև «կաթոլիկ եկեղեցին ընդունում է Քրիստոսի մեջ Աստծու և Մարդու բացարձակ հավասարակշռության գաղափարը, բայց Միջնադարում այն ընկալում է նախևառաջ Նրա Աստվածային հիպոստոսի տեսանկյունից... Այս տեսանկյունից արվեստի և գրականության հիմնական սյուժեն է՝ Աստծու կյանքը, տառապանքը, մահը: Ամեն ինչ պտտվում է սյուժետային այս առանցքի շուրջը՝ զարգացնելով իմաստային այս կամ այն կողմը...»⁶⁴,– մշակույթ-կրոն հարաբերության առնչությամբ գրում է Հ. Էդոյանը: Սակայն հարկ է միաժամանակ նշել, որ Քրիստոսը մշտապես ուշադիր էր մարդու մշակութային առանձնահատկությունների նկատմամբ: Նա սպրեց այս աշխարհում, սակայն այս աշխարհի մաս չէր: Նա չընդունեց այս աշխարհի արժեքային համակարգը, քանի որ այն հակասում էր Իր արժեքներին: Սակայն աշխարհից հոգևոր հեռացումը աշխարհից մեկուսա-

⁶² **Ричард Небур и Райнхольд Небур**, նշվ. աշխ., էջ 543:

⁶³ Նույն տեղում, էջ 91:

⁶⁴ **Էդոյան Հ.**, Շարժում դեպի հավասարակշռություն, էջ 26:

ցում չէ, սեփական գերմշակույթի ձևավորում, որը հիմնվում է կանխակալ կարծիքի և կարծրատիպերի վրա: Այդ պատճառով կաթոլիկ եկեղեցին հաշվի է առնում մշակույթի ազդեցությունը, դերը և որոշ իմաստով նաև նրա անհրաժեշտությունն ու օգտակարությունը⁶⁵:

Հետմիջնադարյան ժամանակներում հոգևոր հասկացության ըմբռնումը գալիս է Վ. ֆոն Հումբոլդտի պատմափիլիսոփայական գաղափարներից: Ըստ նրա պատմագիտական տեսության՝ համաշխարհային պատմությունը ոգու գործության գործունեության արդյունք է, մի ուժ, որ գտնվում է իմացության սահմաններից դուրս և դրսևորվում է առանձին անհատների ստեղծագործական ունակություններով և անձնական ջանքերով: Այս համագործակցության պտուղները կազմում են մարդկության հոգևոր մշակույթը⁶⁶:

Հոգևորի ժամանակակից ըմբռնումներում ամենաընդհանուր իմաստով հոգևոր է համարվում այն ամենի ամբողջությունը, որը դրսևորվում է աշխարհում և մարդու մեջ: Սոցիոլոգիայում, մշակութաբանության, իսկ ավելի հաճախ հրապարակախոսության մեջ հաճախ «հոգևոր» են անվանում հասարակությանը միավորող այն սկզբունքները, որոնք արտահայտվում են բարոյական արժեքների և ավանդույթների տեսքով, և որոնք սովորաբար խտանում են կրոնական ուսմունքներում, ինչպես նաև գեղարվեստի և ընդհանրապես արվեստի ստեղծագործություններում: Այս մոտեցման շրջանակներում հոգևորի արտածումը անհատական գիտակցության մեջ անվանվում է խիղճ, ինչպես նաև հաստատվում, որ հոգևորի ամրապնդումն իրագործվում է քարոզչության գործընթացում, լուսավորչական, գաղափարադաստիարակչական կամ հայրենասիրական գործունեության մեջ:

Հոգևորի ըմբռնման խնդրում միանգամայն այլ դիրքորոշում ունի մարքսիզմը: Այստեղ հոգևորը նույնացվում է գաղափարախոսության հետ: Այս պարագան հատկապես ցանկանում ենք ընդգծել, որովհետև խորհրդային տարիներին շուրջ յոթանասուն տարի մենք առաջնորդվել ենք հենց այդ ըմբռնմամբ, և մինչև այժմ էլ մեզ մոտ

⁶⁵ Այս մասին տե՛ս **Лешук И. И.**, Лабиринты духовности, Одесса, 2001, с. 129-131:

⁶⁶ **St'u Гумбольдт В.**, Язык и философия культуры, М., 1985:

գիտական առանձին ընկալումներում իշխում է հոգևորը գաղափարախոսության հետ նույնացնելու մոտեցումը: Ինքնին այսպիսի իրավիճակը հասկանալի է և բացատրելի, որովհետև խորհրդային տարիներին հաջորդած գաղափարախոսական վակուումի պայմաններում ամենից առաջ նկատելի է հենց հոգևորի ճգնաժամը, Ա. Բահակյանի արտահայտությամբ՝ «ոգու սովը»: Այս երևույթը անմիա^{67*} անվան տակ նկարագրում է Դյուրկհեյմը: Այն նշանակում է սոցիալական հստակ նորմերի բացակայություն, մշակույթի միասնության տրոհում, որի հետևանքով մարդկանց կենսագործունեությունը դադարում է համապատասխանել իդեալական հասարակական նորմերին:

Հատկանշական է Ղևոնդ Ալիշանի ներդրումը, ով «Բազմավեպի» հրատարակության հենց սկզբից, իր խմբագիր լինելու ժամանակ և անգամ հետո բուռն ազգանվեր գործունեությամբ է հանդես եկել: Այսպես, «հայրենիքի» ալիշանյան ըմբռնումը հստակ է և անառարկելի. «Ուր քաղաքացիք չիք՝ չկան և հայրենիք... բուն իսկ հայրենիք մեք ենք, անձն յուրաքանչյուր, և լավությունք մեր նեցուկք են նորա»⁶⁸, – գրում է նա: Անառարկելի և հստակ է Ալիշանի հայրենասիրության ձևակերպումը: «Ճանաչել և պահել անվթար գտեփական **շնորհս ազգիս**, – հորդորում է նա, – **զլեզու** նորա, **զպատմութիւն** նորա, **զսովորութիւն** և **զախորժակս** նորա անվնաս, զհարազատ **դպրութիւն** նորա և զփառս անուան նորա: **Չայսպիսի կամիւմ հայրենասիրութիւն**»⁶⁹ (ընդգծ.– Լ. Խ.): Ընդգծված բառերն ու հասկացությունները ընկած են նրա աշխարհայեցության հիմքում, և իր երկարատև ամբողջ կյանքի ընթացքում մատաղ սերնդին սա է ուսուցանում ու անձնական օրինակով պատգամում Ալիշանը:

⁶⁷ «Անմիան» հունարեն բառ է, որը նշանակում է օրենքից շեղում: Ըստ Դյուրկհեյմի՝ դա հասարակության այն վիճակն է, երբ արժեքրկվում են նախկին արժեքները և բարոյական նորմերը, որոնք նախկինում երաշխավորում էին հասարակության կայունությունը: Տեսությունը հետագա զարգացում ստացավ Ռ. Մերտոնի աշխատություններում (տե՛ս *Социальная структура и аномия*, М., «Прогресс», 1996, с. 299-313):

⁶⁸ «Բազմավեպ», 1845, թիվ 22, էջ 343:

⁶⁹ Նույն տեղում, 1948, թիվ 12, էջ 181:

Իրոք, երբ խարխլվում են ազգի գոյության հիմքերը, խաթարվում է լեզուն, կորսվում են դարերով ավանդված սովորույթները, սասանվում է կրթության համակարգը, խախտվում է ազգի զարգացման բնական ուղին, և իրողություն է դառնում սեփական տեսականները կյանքի կոչելու անհնարինությունը, ի՞նչ հայրենասիրության մասին կարող է խոսք լինել: Հոգևոր, մշակութային, ապա նաև ֆիզիկական ոչնչացման վտանգի առջև կանգնած, մասնատված ու մոլորված հայության համար, ի դեմս Ալիշանի, Մխիթարյան միաբանները փորձում են ստեղծել ինքնապաշտպանական, ազգի փրկության մի համակարգ, որն առաջնորդվում է հայոց պատմության, անցած ճանապարհի վերհիմաստավորման գաղափարով. «Մեր ազգային զենքը պաշտպանական է և ոչ թշնամական»⁷⁰: Մի այլ հոդվածում այս միտքն ավելի որոշակի բնույթ է ստանում: «Երբ մարդկության դեմ կպատերազմի, երբ բռնություն տկարության վրա անգթանա, – գրում է Ալիշանը, – կարելի՞ է զգալ և իբրև անզգա մնալ: Երբ ամեն դի կռվի ձայն կա, պետք է զգայուն սիրտն ալ զրահավորի, բայց զրահավոր և ոչ սպառազեն, զենք ալ ունի՝ բայց պաշտպանվելու և ոչ հափշտակելու»⁷¹: Այդ պարագայում ազատության հասնելու ուղիներից կարևորը ազատ ու անկախ ապրելու հիշողության վերաթքնացումը պիտի լիներ, որին և լծվեց «Բազմավեպը» առաջին իսկ համարներից և համակարգված տեսք ու խորք ստացավ հատկապես այն ժամանակ, երբ հանդեսը խմբագրում էր ինքը՝ բանաստեղծը: «Ալիշանի գործը անուղակի կերպով, բայց շատ հզորապես նպաստած է հայ ազատագրական պայքարի շարժման ծննդյանն ու աճմանը արդի հայ մտքին մեջ, որովհետև ժողովուրդ մը, երբ գիտակցությունը կունենա անցյալին մեջ մեծ ու ազատ եղած ըլլալուն, չի կրնար երկարորեն հանդուրժել ստրկական անարգ կացության մը մեջ կապկպված մնալու, և կշտապե ամեն զոհողություն թափել՝ այդ գեղեցիկ անցյալը դրականապես վերանորոգելու համար»⁷², – գրում է Ա. Չոպանյանը:

⁷⁰ Նույն տեղում, թիվ 2, էջ 18:

⁷¹ «Բազմավեպ», 1854, թիվ 13, էջ 197:

⁷² Չոպանյան Ա., Դեմքեր, Փարիզ, 1924, էջ 100:

Պատմությունը, ըստ «Բազմավեպի» խմբագիրների և մասնավորապես Ալիշանի, վերագրված էր Երևանի չե, դեպքերի ու դեմքերի չիմաստավորված շարան ու անցուղարձ, այլ գոյության էությունը, առօրյա հարընթացում չնշմարվող շերտը:

Ալիշանի համար ազգի հոգին ազգի էությունն է, կենսետանդ, գիտակցության ձևավորման սերմ, ծագումնաբանական ծրագիր: Այն ունի ինչպես սկիզբ, այնպես էլ ապագան արարող ընթացք: Հոգին արարիչ է, և ազգը նրան է պարտական իր մշակութաստեղծ հատկանիշներով: Եվ քանի որ, Ալիշանի կարծիքով, ամեն ազգ ունի սեփական աշխարհընկալում, որ դրված է լեզվի մեջ, ուստի յուրաքանչյուր ժողովուրդ կերտում է սեփական աշխարհայեցողությունը: «Անկարելի է, որ մեկ գաղղիացի մը, մեկ ռուս մը, մեկ պարսիկ մը, մեկ մոնղոլ մը նույն բանը, նույն կերպով մտածեն ու բացատրեն»⁷³, – գրում է նա: Մարդու, անհատի ուղին Աստվածահայտնության մեջ պարզ է, խնդիրը բարդանում է, երբ խոսքը վերաբերում է ազգերին և նրանց փոխհարաբերություններին: Այդ առումով եվրոպացի մտածողներն առաջարկում են ճանապարհներ, որոնք միշտ չէ, որ կարող են ճիշտ լինել. «Եվ ահա այդ ոգիեն մղված իմաստասերներու բանակ մը ամենուն առջև ինկած երկկենցաղ մարդկության ճանապարհը բանալու, իբրև առաջնորդ և միջնորդ խաժամուժ ռամկին, գտնելու և ցուցնելու համար կյանքի ճանապարհը և հասցնելու հետին երջանիկ և ահավոր վախճանին: Գործ մը, մանավանդ թե գեղեցիկ փափագ և հազար անգամ գովելի, թե որ հաջողին. և ոչ թե արտառոց և այլանդակ սերմեր ցաննին ուրիշներու մտքին մեջ, փոխանակ բնական տգիտության արմատը չորացնելու կամավոր աճեցնելին մոլորությունները»⁷⁴, – գրում է Ալիշանը:

Ընդհանուր առմամբ իր և բնության հոգևորացումը յուրաքանչյուր ժողովուրդ կատարում է անհատապես, և այն ունի անկրկնելի

⁷³ Ալիշան Ղ., Երկեր, Ե., 1981, էջ 184: Լեզվի և ազգի փոխհարաբերությունների մասին այս աշխարհայեցողությամբ Ալիշանն ընդհանրություններ ունի Վ. ֆոն Հումբոլդտի լեզվաբանական տեսության հետ, որին, ամենայն հավանականությամբ, ծանոթ էր (հմմտ. Гумбольдт фон В., Избранные труды по языкознанию, М., 1984, с. 301-302):

⁷⁴ Ալիշան Ղ., Ընդ Եղեւնեաւ, Վենետիկ, 1874, էջ 124:

առանձնահատկություններ, որոնք յուրաքանչյուր ժողովրդի հոգևոր մշակույթի տարբերակիչ հատկանիշներն են և հնարավոր են դարձնում այնպիսի հասկացությունների գոյությունը, ինչպիսիք են «հայրենասիրություն» ու «ազգային մշակույթը»: Պատկերավոր ասած՝ հոգևոր մշակույթը ասես օրհներգ է, որ պատմության մեջ երգում են համայն ժողովուրդ: Հանուն այդ հոգևոր երաժշտության ստեղծման ժողովուրդները ապրում են դարեդար՝ աշխատելով և տառապելով, վերելքներով և անկումներով: Այդ երաժշտությունը ինքնահատուկ է յուրաքանչյուր ժողովրդի համար: Դրա մեջ ճանաչելով իր հոգուն համահունչ լինելը՝ մարդը ճանաչում է իր Հայրենիքը և համաձուլվում է նրան, ինչպես մեկ ձայնը ձուլվում է երգչախմբի ձայնին:

Առանձին վերցրած՝ փոքր-ինչ ավելի բարդ է «մշակույթ» հասկացության սահմանումը: «Մշակույթը,– գրում է XX դարի մեծագույն հումանիստներից մեկը,– բոլոր ոլորտներում և բոլոր ասպեկտներով առանձին մարդու և ողջ մարդկության նվաճումներն են այն չափով, որքանով այդ նվաճումները նպաստում են անհատի հոգևոր կատարելագործմանը և ընդհանուր առաջադիմությանը»⁷⁵: Դրանից ելնելով՝ կարելի ասել, որ մշակույթը հոգևոր կյանքի հարաբերությամբ հանդես է գալիս որպես յուրացված և առկա մտքի անհրաժեշտ ատաղձ, որպես բովանդակություն: Այսինքն՝ որպես մտքի ատաղձ մշակույթը նախադրյալ է, իսկ միտքն այն է, ինչ նրանից ստեղծում են. մտածողությունը դրանով դառնում է մշակույթի կազմավորման եղանակ: Այլ կերպ ասած՝ մշակույթը ինտելեկտուալ հայացք է՝ ուղղված իրականությանը՝ այդ իրականությունը կատարելագործելու մղումով⁷⁶: Իսկ քրիստոնեությունը, մասնավորապես Սլիթարյան միաբանության ըմբռնմամբ, որ հաճախ տարփողվում է «Բազմավեպի» էջերում, այլ բան չէ, քան մարդու և իրականության կատարելագործման վարդապետություն⁷⁷:

⁷⁵ Стен Философская энциклопедия, т. 5, М., 1970, с. 46:

⁷⁶ Այս մասին տե՛ս նաև **Моль А.**, Социодинамика культуры, М., 1973, с. 46:

⁷⁷ Այս մասին տե՛ս Այվազովսկու («Բազմավեպ» 1844 թիվ 2, թիվ 6, 1847, թիվ 11 և այլն), Ղ. Ալիշանի («Բազմավեպ», 1849, թիվ 1, թիվ 4, 1850, թիվ 9, 1876, թիվ 6) և այլ հեղինակների առաջաբաններն ու հոդվածները:

Գ-ա 8 (2 ժամ դասախոսություն)

Ազգային հիմնախնդիրների ըմբռնումը «Բազմավեպում»

Ամփոփելով հրապարակման մեկամյա աշխատանքը՝ 1844-ի առաջին համարում «Բազմավեպի» առաջաբանի հեղինակը գրում է. «Ուղիղ և գեղեցիկ դիտավորություն, ամենահարմար միջոց, հաստատուն հույս, անխնց աշխատություն, և **ամենեն ավելի ճշմարիտ ազգասիրություն**, ասոնք եղան Բազմավեպին առաջին տարվանը մեջ մեր առաջին քաջալերող և մխիթարող մտածությունները»⁷⁸ (ընդգծ.– Լ. Խ.): Այսուհետ «ազգասիրություն» և «հայրենասիրություն» հասկացությունները «Բազմավեպի» բառապաշարում հոմանիշներ են: Սակայն կան նաև այլ տարբերակումներ, ասենք՝ «մարդասիրություն» և «ազգասիրություն», որոնք ոչ թե հակոտնյաներ են, այլ սիրո աստիճաններ:

Կրթության և դաստիարակության մեջ է «Բազմավեպը» տեսնում ազգի փրկության և կատարելագործման ճանապարհը: Այն անընդմեջ գործընթաց է. դադարներ և ընդհատումներ չի հանդուրժում, ուստի «ազգի մը բնական կատարելություններուն առանց կրթության մնալը կնմանի մեկ մարդու մը ունեցած գանձին, որ օգտակար բաներու գործածելու և անով փառք պատիվ ու հանգստություն շահելու տեղը, բանա մարդը ան գանձը ու իր թշնամիներուն բաժնե, որ ուժովնան ու իր դեմ ելլեն: Կրթության պակասը, ի վերջո, ըստ «Բազմավեպի», ոչ միայն ազգային, ոչ միայն տնտեսական կամ քաղաքական, այլև ոչ պակաս կարևորության խնդիր է, քանի որ «որչափ որ մեկը շատ կատարելություններ ունենա, այնչափ ավելի կարոտ կըլլա կրթության, ապա թե ոչ, կատարելությունները առանց կրթության մնալով՝ ամեն մեկը կդառնան կըլլան մեյմեկ մեծամեծ մոլությանց արմատներ»⁷⁹:

Ազգային կրթության խնդիրը հույժ անհրաժեշտություն է և առանձին ապացույցների հարկ չունի: Ազգային կրթություն ասելով՝

⁷⁸ «Բազմավեպ», 1844, թիվ 1:

⁷⁹ Նույն տեղում, էջ 58:

«Բազմավեպը» այն ընկալում է ոչ միայն բուն իմաստով, այսինքն՝ ազգային ավանդների վրա ստացած կրթությունը, այլև դրա համագ- գային, համաժողովրդական, ժամանակակից հասկացությամբ՝ գանգվածային կրթությունը, որովհետև առանձին անհատների կրթությունը թեև անհրաժեշտ, բայց բավարար չէ, որպեսզի ազգը հասնի ընդհանուր բարեկեցության: «Ինչե՞ն է, որ Եվրոպայի ազգե- րը մեկմեկե ավելի քաղաքականությամբ ծաղկեր են ու օրե օր կծաղ- կին, բայց եթե ուսմամբ ու կրթությամբ, որոնց այնչափ ջանքով ետևել են: Ուսմամբ ավելի մտքերնին կլուսավորվի, կրթությամբ ալ սրտերնին կշտկվի»⁸⁰:

«Տղաքը դպրատուն խրկելուն օգուտը» հողվածում հեղինակը գրում է. «Ինչ և իցե ազգի մը երջանկության հիմը՝ տղոց դաստիա- րակությունն է. առանց ասոր ոչ բարեպաշտություն կունենա ազգը, ոչ մարդավարություն, և ոչ գիտություն: ...Տղոց դաստիարակությունը իրեք ճամբով կրնա ըլլալ. տունը վարպետ բերելով, երկրորդ՝ տղուն դպրոց խրկելով, երրորդ՝ տղան տանը մեջը կրթելով: Ասոնց մեջ ա- մենեն ապահով ու օգտակար ճամբան՝ տղան դպրոց խրկելն է»⁸¹:

Դաստիարակության հարցում խմբագրությունը առանձնաց- նում է երեք խնդիր, որոնք առհասարակ խոչընդոտում են ազգի ա- ռաջադիմությանը. «Այսպես ուրեմն երեք են, որք ցարդ խոչընդոտն եղեն գեղեցիկ զարգացման ազգիս. այսինքն են ապշություն մտաց, աղքատություն և **օձտումն** եղբարց յիրարաց»⁸²: Վերջինը՝ «**օձտումն** եղբարց յիրարացը», հանդեսի կարծիքով, մեր պատմության ամե- նատղբերգական կողմն է: Անմիաբանությունն ու երկպառակությունն են հիմնական պատճառները և՛ անցյալի, և ներկայի կացության: «Ապշություն մտացը» դաստիարակության, այսինքն՝ կրթության պակասի հետևանքն է, ուստի սա ամենակարևոր խնդիրն է, որ ազգը պետք է դնի իր առջև և ամեն ջանք գործադրի, որպեսզի կարողանա լուսավորել նրան: Այդ ուղով են անցնում եվրոպական ազգերը, այդ- պիսի խնդիր է դնում իր առջև Միսիթարյան միաբանությունը, և լրա-

⁸⁰ «Բազմավեպ», 1846, թիվ 3, էջ 34

⁸¹ «Բազմավեպ», 1843, թիվ 2, էջ 24:

⁸² «Բազմավեպ», 1844, թիվ 20, էջ 314:

գիրը այն խողովակն է, որ կարող է նպաստել «գեղեցիկ զարգացման»:

Ինչ վերաբերում է երրորդ խոչընդոտին՝ աղքատությանը, այսինքն՝ դրա սոցիալական բովանդակությանը և վերացմանը, «Բազմավեպը» նոր հայեցակարգ, ամբողջական դիրքորոշում չունի՝ բացի դեռևս քրիստոնեության ընդունման առաջին դարերի եկեղեցու հայրերի մշակած սկզբունքները:

Իհարկե, եկեղեցու հայրերը սոցիալական, տնտեսական խնդիրների մասնագետներ չէին: Նրանք աստվածաբաններ էին և տնտեսական խնդիրների նկատմամբ ունեին իրենց դիրքորոշումը՝ նյութական բարիքներից օգտվելու տալով միմիայն բարոյական գնահատական: Նրանց «տնտեսությունը», եթե կարելի է այդպես արտահայտվել, ավելի շուտ «փրկության տնտեսություն» էր, քան քաղաքական կամ սոցիալական: Հասկանալի է, որ այդ աստվածաբանական հայացքը նրանց չի խանգարում տեսնել աղքատությունը՝ որպես աղետ և՛ հարուստների, և՛ աղքատների համար, քանի որ առաջիններին շռայլ կյանքը տանում է բարքերի այլասերման, իսկ երկրորդներին՝ կա՛ն կործանման, կա՛ն իրենց ճակատագրի դեմ ընդվզման: «Ես միշտ ասում եմ, թե հարստությունը դավաճանաբար փոխում է նրանց, ովքեր վատ են օգտագործում այն,– երկրորդելով Փրկչին՝ գրում է չորրորդ դարի խոշորագույն աստվածաբան սուրբ Հովհան Ոսկեբերանը,– ...երբ ինչ-որ մեկը հոգ է տանում նրա մասին, հենց այդ ժամանակ դավաղաբար դավաճանում է: Ինչո՞ւ ես այդքան հոգ տանում հարստության մասին, երբ այն երբեք հնարավոր չէ պահպանել: Ցանկանո՞ւմ ես պահպանել այն: Ուրեմն՝ մի թաքցրու, այլ բաժանիր աղքատներին»⁸³:

«Բազմավեպի» հեղինակները լավագույնս տիրապետում էին աստվածաբանական մտքի այս տեղաշարժերին ու փոխակերպություններին և չէին կարող չանդրադառնալ նաև տնտեսական խնդիրներին: Այս առումով նշանակալի են երկրագործության հիմնախնդիրներին վերաբերող հոդվածները: «Բազմավեպի» հեղինակները

⁸³ **Սուրբ Հովհան Ոսկեբերան**, Ճառերի ընտրանի, թարգմ. Թադևոս Խաչատրյանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 88-89:

րը գիտակցում են, որ կապիտալիստական հարաբերությունները արդեն գերիշխող են Եվրոպայում հատկապես արդյունաբերության զարգացման շնորհիվ, սակայն միաժամանակ գիտեին, որ Հայաստանն ունի միայն ագրարային զարգացման հնարավորություններ:

Այդ պատճառով հանդեսի հոդվածագիրները, չանտեսելով բնագիտությունների դերը («Բնական գիտությունը մարդուս միաքը կբանա, արհեստները կկատերալագործե և հարստությանը պատճառ կըլլա»⁸⁴), նախևառաջ անհրաժեշտություն էին համարում երկրագործական գիտելիքների ուսուցանումը (սկնարկներ շերամապահության, ճակնդեղի մշակման, երկրագործական զանազան բույսերի, արտեզյան ջրհորների, ընտանի թռչունների մասին):

Երկրագործության թեմային «Բազմավէպը» անդրադառնում է առաջին իսկ համարներից: «Երկրագործություն. Եվ ահա որ և իցե ազգ, որ և իցե դարու և երկրի մեջ, բարեբախտ ըլլալու համար՝ ամեն բանեն առաջ երկրագործությունը ջանացեր են ծաղկեցնելու և անով միայն առաջ գացեր են: Մեկ երկրի մեջ առանց երկրագործության եղած հարստությունը կմնանի առանց հիման շինած պալատի մը, որ շինվելու ատենը կսկսի փլչիլ»⁸⁵, – գրում է «Բազմավէպը»: Հանդեսը պնդում է. «Երկրագործությունը ոչ միայն արհեստ է, այլև գիտություն»⁸⁶: Այն ծաղկեցնելը նույնպես հայրենասիրության օրինակ է: «Թե որ հայրենասեր մարդու մը համար քաղցր է իր հայրենյաց վրա լսած ինչ և իցե տեղեկությունը, շատ ավելի քաղցր պետք է ըլլա իրեն լսել ու խոսիլ նույն հայրենյացը ան հատկությունները, որ օտարաց առջև ալ մեծ համարում ունի: Մեր Հայաստանին այսպիսի հատկություններն մեկն է որդն ըսված ճճին, ուսկից որդան կարմիր անուճով ազնիվ ներկը կելլե»⁸⁷:

«Բազմավէպի» հեղինակները ստուգապես գիտակցում են իրենց պարտականությունը ազգի առջև և գործի բանիմացությամբ գրում են. «Հույս և ջանք. աս պիտի ըլլա հայրենասիրաց դրոշակին

⁸⁴ «Բազմավէպ», 1843, թիվ 1:

⁸⁵ «Բազմավէպ», 1843, թիվ 2, էջ 26:

⁸⁶ Նույն տեղում, էջ 27:

⁸⁷ «Բազմավէպ», 1843, թիվ 4, էջ 56-57:

վրա գրվածքը, կրես օտարագգի իմաստունին մեկը, և իրավունք ունի, վասն զի ո՞ր և իցե ժամանակ ան մարդիկն, որ իրենց ազգին ուսումնական և բարոյական առաջադիմությանը ճշմարիտ փափաք ունեցեր են՝ աս երկու բանովս իրենց փափաքանաց հասեր են: Հաստատուն հույս ունենալով, թե աշխատանքնին անպտուղ պիտի չմնա, ամեն դժվարությանց դեմ զորացեր են և իրենց աշխատանքին պտղաբերությունը տեսնելով, փոխանակ անհոգության և թուլության մեջ իյնալու՝ ջանքերնին միշտ ավելցուցեր են»⁸⁸:

Մխիթարյանների գործունեության ամենահարուստ ծիրը նրանց մատենագիտական գործունեությունն է: Տասնյակ էջեր կարող է կազմել միայն նրանց հայտնաբերած, Հ. Օշականի արտահայտությամբ՝ «պեղած» և հրատարակած մատյանների ցանկը: Եվ դա նրանց գործունեության լուսավորչական-կրթական գործի ամենացայտուն կողմն է: Իտալական գրականության պատմաբանի խոսքով՝ «հունական և հռոմեական հնության փոխարեն ազգային հնության»⁸⁹ փնտրտուքը ոգեշնչում էր նրանց երևակայությունը, լցնում ազգային հպարտությամբ, հուզավառում միստիկայի հասնող հայրենասիրական-կրոնական ջերմեռանդությամբ: Նախնիների հերոսական անցյալը վերակենդանանում էր ոչ միայն հին մատյաններում հայտնաբերված քաջարի իրադարձություններով և պատմություններով, այլև առաջացնում անկասելի մի ցանկություն՝ գեղարվեստի միջոցներով կերպավորելու դրանք:

«Բազմավէպի» կարծիքով՝ այդ հերոսներից ամենաերևելին, անշուշտ, Հայկ Նահապետի կերպարն է. «Հայկ արտաքին ստույգ պատմությանց մեջ հիշված առաջին երևելի մարդն է Հայք ազգին նախահայրը, և ջրհեղեղեն ետքը հսկայից կամ դյուցազանց մեջ ամենեն երևելին. անոր համար որ Բելա դեմ ելավ և հաղթեց»⁹⁰, – գրում է «Բազմավէպ»: Հայկը, ըստ հանդեսի, խորհելու մեծագույն առիթ է, նրա գործը՝ ազգասիրության և հայրենասիրության դրսևորում. «Այնպիսի ժամանակ և այնպիսի գործի մը մեջ գտնվեցավ և անուն

⁸⁸ «Բազմավէպ», 1844, թիվ 20, 319:

⁸⁹ Де Санктис, История итальянской литературы, т. 2, М., 1962, с. 521-522.

⁹⁰ «Բազմավէպ», 1844, թիվ 5, էջ 76:

հանեց Հայկ, որ հնասեր ու փիլիսոփա պատմագիր մը՝ վրան շատ գիտելիքներ և մտածմունքներ պետք է ընե, բայց մեզի բավական է հոս պարզ ոճով գոնե իր ազգասիրությունը երևան հանել»⁹¹: «Բազմավեպի» համար, Հայկի հերոսականությունից բացի, շատ կարևոր է նրա առաքինությունը: «Հայկ մեր նախահայրը Հաբեթա ցեղեն Թորգոմաց որդին, Նոյ նահապետին թոռանը թոռն է: Կտրիճ հասակի մեջ ինքն ալ աշտարակը շինողներուն հետ Սենասար գնաց, և անոնց մեջ միայն ինքը իր փառքը **անարատ** ետ դարձուց Բաբելոնի ավերակներեն»⁹² (ընդգծ.– Լ. Խ.): Հայկի պատմությունը հանդեսը ներկայացնում է ըստ Մ. Խորենացու «Հայոց պատմության»: Դրվատելով այն գրին հանձնելու Քերթոլահոր արարքը՝ «Բազմավեպը» ընդգծում է Հայկի հերոսականության ու գործի ամենադրական կողմը. «Չենք կրնար բավական շնորհակալ չըլլալ Հայկա ազգասիրությանը, որ զմեզ մահվանե, գերութենե ու նախատինքե ազատեց...»⁹³: Հայկը Հոմերոսի գրչին արժանի հերոս է. «Հոմերոս մը չկրնար գտնել Հայկեն ավելի արժանավոր դյուցազն մը երգելու և ոչ Փիլիաս այնպիսի հարգի նյութ մը, որ Հայկա արձան շինելու արժանի ըլլա»⁹⁴,– գրում է «Բազմավեպը»: Ավելին, հանդեսի կարծիքով՝ «միայն ազգասերը կրնա սրտին մեջ երախտագիտության արձան մը կանգնել, և ամեն գովեստի տեղ կրկնել ան անունը, որ քաղցր է երկրիս և երկնքին, վասն զի երկուքին ալ թշնամին ոտքի տակ առավ»⁹⁵: Ազգային-ազատագրական ոգին արթնացնելու համար մեծ է այդպիսի հերոսի կերպավորման դերակատարությունը, քանի որ «մեծ բարեբախտություն թող համարի իրեն ան ազգասերը, որ երթա ան վսեմ Հայոց ձորին մեջ արձագանգ մը արթնցնե ու ըսե «Հայկ...»⁹⁶: Սակայն այդ խնդիրը իրագործելու համար Հոմերոսի հանճարը բավական չէ, հարկավոր է ազգասիրության մեծ փափագ ունենալ:

⁹¹ «Բազմավեպ», 1844, թիվ 5, էջ 76:

⁹² Նույն տեղում:

⁹³ Նույն տեղում, էջ 78:

⁹⁴ Նույն տեղում:

⁹⁵ Նույն տեղում:

⁹⁶ Նույն տեղում:

Դաս 9-10 (4 ժամ սեմինար պարապմունք)

Սեմինար 1

Քննարկվող հարցեր

1. Հոգևորի ըմբռնման հիմնական ոլորտները «Բազմավեպում»:

2. Հոգևոր մշակույթ – կրոն փոխառնչությունների նկատմամբ «Բազմավեպի» սկզբունքային դիրքորոշումները:

Սեմինար 2

Քննարկվող հարցեր

1. Կրթության և դաստիարակության համագգային դերի արժևորումը «Բազմավեպի» էջերում:

Դաս 11 (2 ժամ դասախոսություն)

Հայոց լեզվի խնդիրների արծարծումը «Բազմավէպում»

«Բազմավէպում» լեզվի խնդիրն առանձին ուսունասիրության նյութ է: Մի բան անտարակուսելի է. դժվար է գերագնահատել արևմտահայ գրական լեզվի մշակման գործում հանդեսի կատարած անուրանալի դերակատարությունը: Հրապարակման պահից սկսած՝ տասնամյակների ընթացքում աստիճանաբար փոփոխվում է այդ լեզուն, և ազատվելով գրաբարայնությունից և «ռամկաբանություններից»՝ այն ավելի ու ավելի է կանոնակարգվում՝ ի վերջո դառնալով Միսաք Մեծարենցի և Դանիել Վարուժանի ոսկեդեմիկ արևմտահայերենը:

Չմոռանաք նաև նշել, որ հանդեսում հաճախ հրապարակվում են հողվածներ և ուսումնասիրություններ, որոնք գրված են գրաբարով, իսկ գրական թարգմանությունների մեծ մասը դարձյալ գրաբար է: Անշուշտ, այս հանգամանքն ունի իր բացատրությունները: Պատճառներից երկուսն ակնհայտ են: Նախ XIX դարի 40-50-ական և մինչև 60-ականների կեսերը գրապայքարը դեռևս շարունակվում էր և չէր հասել վերջնական հանգրվանի: «Բազմավէպը» չէր կարող անտեսել այդ հանգամանքը, նաև այն, որ գրեթե ամենուրեք կրթությունը շարունակվում էր գրաբարով: Իսկ դա նշանակում էր, որ ընթերցողների մեծամասնությունը, եթե չասենք բոլորը, տիրապետում էր գրաբարին և ընթերցման դժվարություններ չուներ: Երկրորդը, որ «Բազմավէպի» համար ավելի էական, սկզբունքային նշանակություն ունի, այն է, որ հանդեսի աշխատակիցների մեծ մասը, հատկապես գրական-թարգմանչական ձիրքեր ունեցողները, կողմնորոշմամբ կլասիցիստներ էին, որոնց համար լեզվի անխառնությունը և վսեմությունը, հատկապես բանաստեղծության մեջ, պարտադիր պայման էր, իսկ նոր-նոր մշակվող, ավելի ճիշտ՝ դեռևս չմշակված ու չկանոնակարգված արևմտահայ աշխարհաբարը չէր կարող բավարարել դասականության պահանջներին: Նույնը կարելի է ասել աստվածաբանական նյութերի թարգմանությունների լեզվի մասին.

դրանք մեծ մասամբ թարգմանվում էին գրաբարով մի շատ պարզ պատճառով՝ չկանոնակարգված աշխարհաբարի երկիմաստություններից խուսափելու նպատակով. մի պարագա, որ բացառված էր դարերով մշակված ու հսկայական ավանդույթներ ունեցող գրաբարում, որտեղ յուրաքանչյուր բառ և հասկացություն հասցվել էր միանշանակության և թափանցիկության:

Գրեթե առանց բացառության աշխարհաբարով են «Բազմավեպի» գիտական, աշխարհագրական, պատմագիտական, մշակութային հոդվածները, որովհետև «Բազմավեպի» նպատակը լուսավորչական-կրթական էր՝ հանրության լայն զանգվածների համար նախատեսված նյութերով:

Ինչևէ, բացի դյուցազնական անցյալի արծարծման խնդրից, «Բազմավեպը» խիստ կարևորում է ազգային լեզվի խնդիրը և հաճախ «Ազգային խնդիր. հայոց լեզվին հնությունը» խորագրի տակ քննում է հատկապես հայերենի հնության պարագան: Լեզվական խնդիրներում այս պատմահայեցողությունն այնքան էլ չի տարբերվում Մ. Չամչյանի պատմագիտական գաղափարներից, որոնք, ըստ Լեոյի, տասնամյակներ սնեցին հայոց սնափառությունն ու ինքնագոհությունը: Լեոն քննադատում է այդ պատմափիլիսոփայությունը. «Չամչյանը իր երեք խոշոր հատորներով հայի ինքնաճանաչությունը բարձրացրեց, մեծացրեց,– գրում է նա: – Բայց տեսեք, թե ինչ ինքնաճանաչություն է այդ.–հայությունն իբրև առաջինը, անդրանիկը մարդկային բոլոր ցեղերի մեջ, իբրև գերագույն կատարելություն, իբրև մայր բոլոր ազգերի քաղաքակրթության, իբրև երկնքի ընտրյալ մի ժողովուրդ: Այդ գերբնական, վեհ, բոլոր հասկացողությունների մեջ ամենանվիրական, բոլոր սրբությունների մեջ ամենից բարձր սրբազան ստացվածքները հայը, Չամչյանի շնորհիվ, ժառանգում էր երևակայության ստեղծած արագությամբ և առատությամբ, որպեսզի նրանց վրա հիմնի իր ազգային ինքնագոհությունը, սնապարծությունը և այլ այդպիսի թթվացնող և քարացնող հատկություններ: Եվ ահա այդ կատարելությունները, այդ շողշողուն փառքերը տիրապետող են հանդիսանում մեր անհատական և հասարակական մտքի վրա, մթացնում են նրան երկար և երկար ժամանակ, ստեղծելով

գրականության և դպրոցների մեջ հոսանքներ, որոնք ինքնաստեղծ մշուշների և տեսիլքների մի ամբողջ պաշտամունք են, որ ֆետիշականության է հասցնում ազգության գաղափարը»⁹⁷:

Գրախոսի՝ Հայաստանում լինելու փաստի հաստատման ձգտումը միայն կլասիցիզմի պոետիկայում «հայկական գաղափարաբանության» ստեղծած բանաստեղծական խորհրդանիշ չէ, ինչպես պնդում է հայկական ռոմանտիզմի պատմաբանը⁹⁸, ոչ էլ «կրոնական պատրիստիկայի» գաղափարական պատրանք, ինչպես կարծում է «Բազմավեպի» մարքսիստ քննադատը⁹⁹: Այն բնավ տարակուսելի չէ «Բազմավեպի» հեղինակի համար, մնում է, որ դրանից հայերենի հնությունն ապացուցող կարևոր եզրակացություն արվի: «Երբոր մեկը ստույգ գիտե թե Ադամա դրախտը Հայաստանի մեջ էր, և թե Նոյ Նահապետը տապանեն որ ելավ՝ Հայաստան իջավ ու հոն բնակեցավ, ուրիշ նոր նոր ապացույցներու չկարոտիր որ հանդովի՝ թե Հայոց լեզուն այնչափ հին է և որ Ադամա լեզուն կրնա ըսվիլ, և թե ուրիշ ամեն լեզուներու սկիզբն ու մայրն է: Բայց որովհետև իմաստնոց մեջ շատ վեճեր ու զանազան կարծիքներ եղեր են աս բանիս վրա, հարկավոր է որ ուրիշ պատճառներով ալ ցուցնենք մեր լեզվին առաջնությունը»¹⁰⁰, – գրում է հանդեսը:

Լինելով կրոնական կազմակերպության տպագիր օրգան՝ պահպանողական համարվող «Բազմավեպը» ազատության հարցում շատ ավելի առաջադիմական հայացքներ ուներ, քան աշխարհիկ, իրեն լիբերալ կարծող շատ ու շատ հայկական թերթեր ու հանդեսներ: Եվ դա գալիս էր ոչ միայն Մխիթարյան միաբանության ազատախոսությունից, այլ եվրոպական քաղաքում՝ Վենետիկում տիրող կացությունից ու մտայնություններից: Գործելով Եվրոպայում՝ Մխիթարյան հայրերը շատ ավելի ճշմարիտ ընթացքի մեջ էին տեսնում մարդկային քաղաքակրթության առաջադիմության ուղիները և

⁹⁷ Լեո, Հայոց պատմություն, հ. 3, Ե., 1946, էջ 1015-1016:

⁹⁸ Տե՛ս Սարինյան Ս., Հայկական ռոմանտիզմ, Ե., 1966, էջ 88:

⁹⁹ Տե՛ս Կարինյան Ա., Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 2, 1956, էջ 162:

¹⁰⁰ «Բազմավեպ», 1844, թիվ 21, էջ 332:

առանձնապես ուտոպիստական-սոցիալիստական հակումներ չունեին: Եվ ազգային հարցերում իրենց հավասարակշիռ մոտեցումներով, անգամ պահպանողականությամբ, ավելի օգտակար փորձեցին լինել հայության առաջադիմությանը, քան հեղափոխական կազմակերպությունները:

Դաս 12 (2 ժամ դասախոսություն)

«Բազմավեպը» իտալական իրականության համատեքստում

Հոգևորի, ազգայինի և մշակույթի այս ըմբռնումները, որոնք կազմում են հայրենասիրության հիմքերը, շատ կողմերով անհասկանալի կմնան, եթե «Բազմավեպի» մեր ուսումնասիրման ժամանակաշրջանում (1843-1880) չդիտվեն համաեվրոպական, մասնավորապես իտալական իրականության համատեքստում: Այստեղ այդ վերջին հանգամանքը կարևորում ենք, որովհետև հանդեսը հրապարակվում էր Իտալիայի խոշոր կենտրոններից մեկում՝ Վենետիկում: Այդ ընթացքում «Եվրոպան,– գրում է իտալական գրականության պատմաբանը,– պատկառանքով վերակենդանացրեց իր հիշողությունները, հափշտակվեց նրանով, ձուլվեց նրա հետ, վերածնեց անցած կերպարներն ու զգացումները: Յուրաքանչյուր ժողովուրդ վերադառնում է իր ավանդների և նրանցում փնտրում իր գոյության արդարացումն ու տեղը աշխարհում, իր ձգտումների օրինականությունը: Հունական և հռոմեական հնության փոխարեն հայտնվում է ազգային հնությունը՝ ներծծված միավորիչ բարձրագույն ոգով՝ կաթոլիցիզմով: Արթնացավ երևակայությունը՝ ոգեշնչված ազգային հպարտությամբ և միստիկայի հասնող կրոնական հուզավառությամբ»¹⁰¹:

Խնդիրը նույնն է հայության պարագայում: «Եվ ասի, ոգևորված դարաշրջանի մեծ գաղափարներով, հայ մտավորականները առաջադրում են երեք գործոններ՝ հայրենիք, լեզու, կրոն, որոնք պետք

¹⁰¹ Де Санктис, История итальянской литературы, т. 2, М., 1962, с. 521-522.

է իրականացնեին ազգային վերաշինության մեծ նպատակը և հետևելով նրա օրինակին՝ գնացին դեպի հայոց պատմության հնագույն դարերը»¹⁰², – գրում է գրականության պատմաբանը: «...Կրթել և դաստիարակել հայրենասիրական ոգով հայ երիտասարդներին... պահպանել եկեղեցու և ազգի հարատևությունը»¹⁰³, – խնդրի առնչությամբ մեկնաբանում է պատմաբան, ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը: Խոսքը վերաբերում է մշակութային ընդհանուր վերանորոգչությանը, որ գրեթե երկու դար բազմաթիվ պատճառներով դուրս էր մնացել հայ մտքի տեսադաշտից: Բարդ էր այդ խնդիրը, սակայն համաներկայական պատմությունը ընթանում էր նորոգման ճանապարհով և հաճախ եվրոպական կրթություն ստացած, բայց այդպես էլ հայրենիքում գործունեության նպաստավոր պայմաններ չունեցող հայ մտածողները գործում էին գաղթօջախներում: «Բազմավեպի» «Պատմություն գյուտից» հոդվածի հեղինակը, անդրադառնալով XVII դարից սկսած մշակութային նոր շարժմանը, գրում է. «Մարդիկ կրոնքին վեճերում պատճառովը՝ երկայն ատեն ուսման հետևե ըլլալու անփույթ ըլլալով, աս դարուս մեջ նորեն մասնավոր եռանդությամբ, գիտություններ սկսան ծաղկեցնել, որով բնաբանության, բնալուծության, չափական գիտությանց ու բժշկականության մեջ շատ գյուտեր գտնվեցան»¹⁰⁴:

Հայ վերանորոգիչները, ի դեմս Մխիթարյանների, փորձեցին իրենց մշակույթն ստեղծել, և «...նրանք ամենից առաջ հայտնագործեցին Հայաստանի պատմական անցյալը, ցույց տվին, որ մենք պատմություն ունենք՝ հոգևոր և քաղաքացիական»¹⁰⁵, – գրում է հայկական ռոմանտիզմի տեսաբանը: Այդ նպատակով նրանք, ինչպես գրում է Մ. Աբեղյանը, «հիացմունք պատճառող ջանքերով աշխատում են կարդալ և հասկանալ մեր անհասկանալի դարձած ու մոռացված գրականությունն ամբողջ, թե՛ եկեղեցական և թե՛ աշխարհ-

¹⁰² Մարինյան Ս., Հայկական ռոմանտիզմ, Ե., 1966, էջ 85:

¹⁰³ Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 2, 1951, էջ 171-172:

¹⁰⁴ «Բազմավեպ», 1844, թիվ 16, էջ 309::

¹⁰⁵ Մարինյան Ս., նշվ. աշխ., էջ 87:

հիկ բնավորություն ունեցող ձեռագրերը՝ ինքնուրույն թե թարգմանական երկերը՝ որքան որ կային կամ ճարում էին: Նրանք արտագրում են բազմաթիվ նոր ձեռագրեր... հորինում են քերականություն, տրամաբանություն և այլ նոր դասագրքեր՝ օգտվելով գլխավորապես հին գրքերից և նույնիսկ թարգմանություններ էլ են անում»¹⁰⁶:

«Բազմավէպը», հանձին Մխիթարյան մխաբանության, գիտակցում է իր առաքելությունը: «Որ և իցե ազգի մը նախնիքը, որ աստենոք գրականության մեջ ծաղկեր ու այս գեղեցիկ պարծանքն ունեցեր են, ի՛նչ հարկավոր բան է, որ իրենց հարազատ սերունդներուն օրինակ ըլլան այս ասպարիզին ընթացքին մեջ, որպես զի նույն ազգին սեփական ոգին տան անոնց: Նախնյաց գրվածքները իրենց հնությանը համար ավելի քննության արժանի են. և ասոնցմե մեկ քանիեն մատենագրության արվեստը կտորվի մարդ, որ հանճարին կենդանություն կու տա. ուրիշներեն ալ ազգային լեզվին վրա կրնանք տեղեկանալ, որ այդպիսի մատենագիրներու ձեռքը բյուրավոր գեղեցկություններ կառնե: Եվ այսպիսով ազգային մատենագրությունը ի հարց իրենց որդիքներուն կավանդվի: Այս երկու նպատակովն է որ Մխիթարյան մխաբանությունը՝ փոշոտած ձեռագիրներու մեջնե ամենայն ծանր աշխատությամբ հանելով մեր նախնյաց գրվածքները, քանի մը տարիե ի վեր կարգավ կտպագրե գանոնք՝ ի վայելումն մեր ազգայիններուն»¹⁰⁷, – գրում է «Բազմավէպի» հեղինակը:

Հանդեսը գիտե, որ միանգամայն տարբեր բնույթ և ուղղվածություն ունեն «աշխարհիկ» և «հոգևոր» գրվածքները, սակայն նրա նպատակը ոչ թե միայն հավատի հոգևոր խորհրդի տարփողումն է (դրա համար այլ միջոցներ և եղանակներ կան), այլ ազգին օգտակար իմացություններ տալը: «Մեկ ողջամիտ քրիստոնյա ազգ մը չկա Եվրոպացվոց մեջ, որ հավատո սուրբ խորհուրդները օրագրի կամ լրագրի նյութ ընեն: Եվ թե որ կան իրենց մեջ օրագիրներ, որ եկեղեցական նյութերու վրա կխոսին, աղեկ գիտնալու է որ անոնք դրսի լուրեր ու թեթև տեղեկություններ ամենևին չեն տար, որով ավելի

¹⁰⁶ Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, հ. 2, էջ 439:

¹⁰⁷ «Բազմավէպ», 1855, թիվ 14, էջ 217:

մասնավոր գրքերու կարգը կանցնին՝ քան թե օրագրությանց: Իսկ մեր հասկցած և մեր ազգին հարկավոր ու օգտակար ճանչցած օրագիրը ան է՝ որ ո՛րչափ կարելի է շատ բանի վրա ստույգ տեղեկություններ տա՝ պարզ, դյուրինաց ու զվարճալի ոճով»¹⁰⁸, – գրում է «Բազմավեպը» համարներից մեկում:

Անցյալի հանդեպ այդ հարաճուն հետաքրքրությունն է պատճառներից մեկը, որ այստեղ՝ Վենետիկում, Սուրբ Ղազար կղզու միաբանների համար կլասիցիզմը դարձավ այն հիմնական գրական հունը, որը Եվրոպայում իշխող ուղղություն էր ավելի քան մեկ դար: Եվ բնական է, որ եվրոպական իմաստով գրական այդ առաջին ուղղությունը հայ գրականության մեջ ծնունդ առավ հենց այս քաղաքում՝ Վենետիկում, Մխիթարյանների ջանքերով: Այստեղ էր, որ կլասիցիզմն ունեցավ իր տեսական հիմնավորումները դեռևս 1711 թվականին, որ պարագծեց Խաչատուր վարդապետ Էրզրումցին իր «Համառօտական իմաստասիրութիւն» գրքում: Վարդապետը գրքում տալիս է նաև արվեստի սահմանումը: Սահմանում, որ հիմնավորում է արվեստի և հանճարի արարողական բնույթը, որոշակի կանոնների ենթարկվող մարդկային ունակությունը: «Արուեստ, որ և արհեստ ասի, է ունակութիւն բանիվ արարողական, – գրում է տեսաբանը, – այսինքն է ունակութիւն, որ ավանդէ զբացորոշեալ կանոնս, և հրամայէ առնել զգործն իմն ըստ կանոնաց»¹⁰⁹: Այդ ուղղությամբ նշանավոր աշխատություն կարելի է համարել նաև Մխիթարյան վարդապետ Էղվարդ Հյուրմուզյանի «Առձեռն բանաստեղծութիւն համառօտեալ» գրքույկը: Ինքնին այս փաստերը խոսուն վկայությունն են այն բանի, որ Մխիթարյանները վանքի պատերի ներսում ամփոփված, կտրված չէին իրենց ժամանակից և անմիջապես արձագանքում էին դարաշրջանի առաջադրած թե՛ հոգևոր-բանասիրական, թե՛ գրական, թե՛ տնտեսական, թե՛ բնագիտական, առիթի դեպքում՝ անգամ քաղաքական խնդիրներին: Այս հանգամանքը կարևորում ենք նաև

¹⁰⁸ «Բազմավեպ», 1844 թիվ 18, էջ 288

¹⁰⁹ **Խաչատուր վարդապետ Էրզրումցի**, Համառօտական իմաստասիրութիւն, Վենետիկ, 1711, էջ 16 (մեջբերումն ըստ՝ «Հայ նոր գրականության պատմություն», հ. 1, էջ 105):

այլ իմաստով. Մխիթարյանների ժառանգությունը սովորաբար քննվել և գնահատվել է մեկուսի՝ անգամ վորձ չանելով այդ ժառանգությունն ուսումնասիրել եթե ոչ համատեղությական, ապա գոնե իտալական իրականության համատեքստում: Խոսքը վերաբերում է նաև «Բազմավեպին», որ հրապարակ եկավ մի ժամանակաշրջանում, երբ Իտալիայում մամուլի համար ամենաազատական շրջանն էր՝ 1840-1848 թթ.: «1848 թվականին իտալական մամուլը աննախադեպ քաղաքական ազատություն ստացավ շնորհիվ այն բանի, որ միլանցիները ողջ Լոմբարդիայից վոնդեցին ավստրիացիներին, նույնն արեցին վենետիկցիները Վենետիկից... Պիոս IX-ը Հռոմում, իսկ Կարլ-Ալբրեխտը Պյեմոնտում կամավորապես սահմանադրություն հռչակեցին»¹¹⁰:

Այս ամենի հետևանքը եղավ քաղաքական ազատությունը, մասնավորապես մամուլի ասպարեզում: Այդ պահից սկսած՝ անհնար եղավ կասեցնել կարծիքների ազատությունը: Նույն ժամանակ Մանջինին հրատարակում է «Ժողովրդական Իտալիա» ազատական թերթը: Դրանից հետո թեպետ ավստրիացիները կրկին վերադարձան, սակայն մամուլի վրա այլևս առաջվա սահմանափակումները չգործեցին: Իտալական մամուլի պատմաբանը այդ առիթով գրում է. «Գրաքննությունը ոչ այնքան խիստ էր, որքան հիմար»¹¹¹: Սակայն դա էլ երկար չտևեց, և Գարիբալդիի նշանավոր արշավը Սիցիլիայի վրա վերջ տվեց Բուրբոնների իշխանությանը Իտալիայում և հիմք դրեց երկրի ազգային միավորմանը: Կարճ ժամանակ անց հրապարակվում է նաև մամուլի մասին օրենք, որով չնչին սահմանափակումներով (արգելվում էր թագավորին և նրա ընտանիքի անդամներին վիրավորել, փառաբանել իշխանության որևէ ձև, որը կհակասեր սահմանադրական միապետությանը, ոչ մի օրգան չէր կարող հրատարակվել առանց պատասխանատու խմբագրի, իսկ հրատարակիչը պետք է երբեք դատված չլիներ և ունենար անբասիր

¹¹⁰ Стів Лабриола А., Периодическая печать в Италии,
URL://evartist.narod.ru/text2/34_6.htm/ (21.08.2011).

¹¹¹ Նույն տեղում:

վարք¹¹²) օրինականացվում է խոսքի և կարծիքների ազատությունը: Սակայն այդ ազատությունը տարածվում էր միայն պարբերական մամուլի վրա և կիրառելի չէր գրքերի հրատարակչության, գիտական ուսումնասիրությունների համար: Այդ օրենքով գրքի հրատարակիչները պարտավոր էին տպագրել միայն երեք օրինակ և ներկայացնել թագավորական դատարան, որոնցից մեկը պահպանվում էր թագավորական արխիվում, երկրորդ օրինակը տրվում էր տեղի հանրային գրադարանին, իսկ երրորդը ուղարկվում էր Ֆլորենցիայի ազգային գրադարան: Օրինախախտ հրատարակիչը ենթարկվում էր 100 լիբր տույժի: Այս օրենքով բացատրելի է դառնում այդ թվականներին Մխիթարյան միաբանության հրատարակած գրքերի սակավությունը և «Բազմավեպի» ազատական պահվածքը բազմաթիվ հարցերում:

Դարասկզբի առաջին տարիներին իտալական գրականության մեջ շարունակվում են կլասիցիստական միտումները: Դա Վինչենցո Մոնտիի (1754-1828) ստեղծագործության վերելքի տարիներն էին: Դեռ անցյալ դարի 80-ականներին նա հայտնի էր ազատության, արդարության և ստրկացած հայրենիքի վերածննդի մասին երգերով և ողբերգություններով, որոնք մեծ ազդեցություն են թողել Ղ. Ալիշանի ստեղծագործության վրա («Նահապետի երգերը» և «Պլպուլն Ավարայրի»):

Մոնտիի «Գայոս Գրակք» ողբերգության մեջ նորովի է մեկնաբանվում հերոսի և բռնակալական իշխանության միջև ընթացող պայքարի կլասիցիստական ըմբռնումը: Գայոս Գրակքը հանուն արդարության և հայրենիքի ազատագրության առաջնորդում է ժողովրդական շարժումը, մի բան, որ անկարելի էր մաքուր կլասիցիստական գործերում:

XIX դարի առաջին կեսին իտալական ռոմանտիզմն ապրում է իր զարգացման երկու փուլերը: Դրանց ժամանակագրական համընկումները ազգային-ազատագրական շարժման փուլերին, ևս մի

¹¹² Ըստ այդ օրենքի՝ Իտալիայում հետապնդվում էր կառավարման ավտոկրատական ձևի փառաբանումը: Բազմաթիվ թերթեր հալածվում էին պառլամենտական իշխանության դեմ գրելու պատճառով:

վկայությունն են այն բանի, որ ժամանտիզմի ճակատագիրը սերտորեն կապված է Իտալիայի անկախության ճակատագրի հետ: «Եթե մենք չունենք միասնական քաղաքական հայրենիք...սպառ ռվ կարող է մեզ խանգարել ստեղծելու միասնական գրական հայրենիք»¹¹³, – 1816-ին գրում է Ջովանի Բերշեն իտալական ժամանտիզմի առաջին մանիֆեստ համարվող «Ոսկեբերանի կիսալուրջ նամակը որդուն» գործում:

Այդ ընթացքում իտալացի ժամանտիկները մշակեցին պատմական դրամայի յուրահատուկ ժանրային հայեցակարգ: Մի շարք կետերով այդ հայեցակարգը նշանակալի ազդեցություն թողեց համակրոպական նշանակության այնպիսի ստեղծագործողների վրա, ինչպիսիք են Ստենդալը և Հյուգոն: «Երկխոսություն ժամանակի և տեղի միասնության մասին դրամայում», որը իտալական ժամանտիզմի խոշորագույն տեսական աշխատություններից մեկն է, Էրմես Վիսկոնտին առաջադրում է նոր, կլասիցիզմից տարբերվող տեսություն՝ «ժամանակի մեջ իրադարձությունների վերստեղծման» ժամանտիկական սկզբունքը, այսինքն՝ գիտակցության մեջ իրադարձությունների, հերոսների ճակատագրերի և նրանց արարքների բնական ու աստիճանական զարգացման նկարագրությունը, որը հնարավորություն է տալիս մարդկային կյանքը դիտարկելու ոչ թե կլասիցիստական հստակ, նախապես կանխորոշված պատճառաբանվածությամբ, այլ ազատ, առանց կաշկանդումների երևակայության թռիչքով¹¹⁴:

Թվարկված և էլի շատ ուրիշների անուններն այդ ժամանակաշրջանում հաճախ են հանդիպում «Բազմավեպի» էջերում երբեմն նրանցից կատարվող թարգմանությունների տեսքով, երբեմն՝ գրական ընդհանուր տեսություններում: Չմոռանա՞նք նաև վերիիշել, որ Գ. Այվագովսկին թարգմանել և առանձին գրքով հրատարակել է ժամանակին համակրոպական ճանաչում ունեցող Միլվիո Պելլիկոյի «Իմ բանտերը» գիրքը (1854), ստեղծագործություն, որի ռուսերեն թարգմանության առիթով գրական գնահատականներում այն-

¹¹³ История всемирной литературы, т. 5, 1988, с. 178.

¹¹⁴ Նշվ. աշխ., 1989, т 6, с. 213-216:

բան ժլատ Ա. Ս. Պուշկինը գրում է. «Կա գիրք, որի յուրաքանչյուր բառը մեկնաբանված է, բացատրված, քարոզվել է աշխարհի բոլոր ծագերում, կիրառվել կյանքի բոլոր հնարավոր իրավիճակներում և հանգամանքներում, որից անհնար է կրկնել որևէ արտահայտություն, ինչ անգիր չգիտեն բոլորը, և չլինի ժողովուրդների համար առածանի. այն արդեն մեզ համար ոչ մի անհայտ բան չի պարունակում. սակայն սույն գիրքը կոչվում է Ավետարան... Եվ իզուր չէ, որ փորձելով մի քանի խոսք ասել հեզ տառապայալի գրքի մասին՝ համարձակվեցինք հիշատակել աստվածային Ավետարանը. քիչ են եղել այն ընտրյալները (անգամ եկեղեցու առաջին հովիվների շարքերում), որոնք իրենց ստեղծագործություններում ոգու հեզությամբ, քաղցր պերճախոսությամբ և մանկան պարզասրտությամբ մերձեցել են երկնային ուսուցչի քարոզներին: Ուշ ժամանակներում «Նմանություն Հիսուս Քրիստոսին» գրքի անհայտ հեղինակը, Ֆենելոնը և Սիլվիա Պելլիկոն մեծապես պատկանում են սույն ընտրյալներին»¹¹⁵: Պուշկինի հիշատակած երեք հեղինակների գործերը Մխիթարյանները թարգմանել են և՛ առանձին գրքերով, և՛ հատվածաբար հրատարակել «Բազմավեպի» էջերում: Նշենք նաև, որ Պելլիկոն նշանավոր լրագրող էր, և նրա հրատարակած «Միջնորդ» լրագիրը մեծապես նպաստեց իտալական ազգային-ազատագրական պայքարի թեժացմանը:

Ահա այսպիսի գրական, քաղաքական միջավայրում և հանգամանքներում էր գործում Մխիթարյանների միաբանությունը XIX դարի 40-ական թվականներին, և նրանց հրատարակած լրագիրը կամա-ակամա անտարբեր չէր կարող լինել երկրում կատարվող իրադարձություններին, հասարակական տրամադրություններին, մանավանդ բազմաթիվ էին քաղաքական, սոցիալական այն խնդիրները, որոնք նման էին Հայաստանում տիրող իրավիճակին և՛ օտար զավթիչների լծի տակ կեղեքվող երկու ազգերի ճակատագրերի, և՛ ազգային-ազատագրության գերակա խնդրի հրամայականի պահանջով: Մի խոսքով, իտալական, մասնավորապես վենետիկյան հոգևոր

¹¹⁵ Пушкин А. С., Полное собрание сочинений, т. 7, «Наука», 1978, с. 322.

և քաղաքական կյանքի որդեգրած սկզբունքների մնանությունը Միաբանության հայեցողությանը սոսկ հայ հոգևորականների կրավորական պահվածքի հետևանք չէին, այլ խորապես կապված էին հայ իրականության մեջ տիրապետող վիճակի և դրանից ածանցվող միևնույն խնդիրների լուծման հետ: Գրելով «Ո՞վ կրնա պատմել Իտալիո ժողովրդոց ցնծությունը: Մեթթեռնիքի իյնալը կարծես թե իրենց ազատությանը ավետիսն էր ...ամեն տեղ սկսան ոտքի ելնել: Տեսնելու հանդես մըն էր ան օրը ժողովրդյան ցնծությունը»¹¹⁶ տողերը՝ Այվազովսկին շարունակում է. «Մենք հայերս ասկեց ետքն ալ պատկառելի և սիրելի մնանք աս հյուրընկալ երկրներուն հեղավոխությանց մեջ»:

Գ-աա 13 (2 ժամ սեմինար պարապմունք)

Զննարկվող հարցեր

1. «Բազմավեպի» դերը արևմտահայ գրական լեզվի մշակման գործում:
2. XIX դարի 2-րդ կեսի իտալական արվեստը «Բազմավեպի» էջերում:

Գ-աա 14 - 15 (4 ժամ դասախոսություն)

«Բազմավեպի» գրական և թարգմանչական քաղաքականությունը

Գրեթե բոլոր հանրագիտարաններում գրական քաղաքականությունը համարվում է պետական-քաղաքական և հասարակական համակարգի մի օղակ, որը, համաձայն տվյալ պետության մեջ գոյություն ունեցող դրույթների և մշակվող գրաքննական օրենքների, ձեռք է բերում իրավական-կազմակերպչական բնույթ և սահմանում հեղինակների, խմբագրությունների, հրատարակչությունների իրա-

¹¹⁶ «Բազմավեպ», 1848, թիվ 8, էջ 136:

վունքներն ու պարտականությունները: Որոշ երկրներում գրական քաղաքականությունը գործում է գրողների, քննադատների, գրական ուղղությունների, մամուլի շուրջը հավաքված միությունների կամ կազմակերպությունների միջոցով: Իշխանությունը գրական քաղաքականության միջոցով արտահայտում է իր գաղափարներն ու պահանջները և դրանց իրագործման համար միավորելով ստեղծագործողներին՝ նպաստում, որ գրականությունը դառնա հասարակական ուժ՝ իր թելադրած օրենքներով:

Առաջին գրական գործը, որ թարգմանաբար տպագրում է «Բազմավեպը», Լամարթինի «Ներդաշնակություն» ժողովածուից «Երեխային արթնացնելու աղոթք» բանաստեղծությունն է: Այն թարգմանված է գրաբարով: Առհասարակ պետք է ասել, որ բանաստեղծությունների թարգմանության համար «Բազմավեպի» նախընտրած լեզուն գրաբարն է, մի հանգամանք, որ առանձին խոսակցության թեմա է: Մի բան պարզ է, որ այդ նախընտրությունը սկզբունքային է այն առումով, որ ըստ Մխիթարյան հայրերի՝ բանաստեղծությունը վսեմ արվեստ է, աստվածների լեզու, ուստի և այդ լեզուն չէր կարող լինել դեռևս անմշակ աշխարհաբարը, որովհետև այն լի էր ռամկաբանություններով և օտարաբանություններով: Չմոռանանք նաև նշել, որ նրանց գրական պատկերացումներում դասականությունը (կլասիցիզմը) գերիշող դիրքեր ուներ ընդհուպ XIX դարի 60-ական թվականները, իսկ դասականության համար գրականության (մասնավորապես բանաստեղծության և դյուցազներգության մեջ) լեզվի խնդիրը չափազանց էական էր: Լեզուն պետք է լիներ «անխառն» և «ազնվական»: Լեզվի հարցում այդպիսի «բժախնդրություն» էին ցուցաբերում առաջին կլասիցիստները՝ Բուալոն, Ռասինը, Կոռնելը և այլք¹¹⁷: Նույն վերաբերմունքն առկա է նաև Մխիթարյանների տեսաբանների աշխատություններում:

Իհարկե, «Բազմավեպը» բանաստեղծություններ է հրապարակում նաև աշխարհաբարով, ինչպես օրինակ՝ Ղ. Ալիշանի գործերը, սակայն, դրանք, կարծում ենք, ավելի շուտ հեղինակային նախա-

¹¹⁷ Տե՛ս **Барт Р.**, Избранные работы. О Расине, М., «Прогресс», 1989, с. 206-208:

ձեռնություններ են, քան ընդհանուր սկզբունքից շեղումներ: Հետաքրքիրն այն է, որ Լամարթինի բանաստեղծության գրաբար թարգմանությունն ուղեկցվում է աշխարհաբար փոքրիկ առաջաբանով, որը դարձյալ ապացուցում է մեր ասածի իրավացիությունը, այն է, թե բանաստեղծության համար նախընտրելին գրաբարն է, իսկ իմացության, գիտելիքների տարածման խնդրում՝ աշխարհաբարը: Այնպես որ, լեզվական այդպիսի «երկկենցաղությունը» «Բազմավեպում» միանգամայն բնական է, ինչպես հետագայում Մ. Պեշկոբաշյանի պարագայում, երբ «աշխարհիկ թեմաներով» մի շարք բանաստեղծություններ գրելով՝ բանաստեղծն անցավ գրաբարի: Հիշենք, որ Պեշկոբաշյանը ուսանել էր Մխիթարյանների մոտ, և բանաստեղծության մասին նրա պատկերացումները գալիս են հենց նրանց սկզբունքներից: Սա, անշուշտ, չի նշանակում, թե նրանք «արհամարհում» էին աշխարհաբարը, մանավանդ որ հանդեսի նյութերի մեծ մասը հրատարակվում էր այդ լեզվով: Բացառություն են կազմում միայն բանաստեղծությունը և պատմական բնույթի որոշ փիլիսոփայական թարգմանական հոդվածներ: Բանաստեղծության հանդեպ այդպիսի լեզվական «երկկենցաղությունը» երբեմն չի վերաբերում նաև «ռամկական և գավառացի բարբառներով» ստեղծագործող բանաստեղծներին: Այսպես, 70-ական թվականներին հրատարակված մի տեսական հոդվածում «Բազմավեպի» հեղինակը, անդրադառնալով միջնադարյան թափառական երգիչ բանաստեղծների լեզվին, գրում է. «Մեր իտալական լեզվին սկսան ստոնք մշակություն տալ և դպրություն մը կազմել՝ երկու դար հառաջ քան զբուն գրականություն Իտալիո»¹¹⁸, որից կարելի է ենթադրել, որ, այնուամենայնիվ, ռամկական-ժողովրդական բանաստեղծության պարագայում նրանք բացառություն էին անում: Այդ միտքը մեզ համար է՛լ ավելի է կարևորվում մեկ այլ ենթատեքստում. Ղ. Ալիշանի աշխարհաբար բանաստեղծությունները, իրենց բնույթով ռամկական-ժողովրդական լինելով՝ կարող էին նաև այդ լեզվով գրվել:

¹¹⁸ «Բազմավեպ», 1872, թիվ 3, էջ 48:

Ինչևէ, վերոհիշյալ համարի առաջաբանում հանդեսը գրում է. «Մենք բանասերներուն հաճոյական բան մը ընել ուզելով, աս օրագրիս մէջ երբեմն երբեմն ազգային մատենագրութենէն ի գատ՝ կնայինք, որ հիմնիկվան օտար ազգաց մատենագրութեանը վրա ալ խոսինք, ու մեր աստեղի երևելի մատենագիրներուն գրվածքներէն գէթ մանր ճաշակներ տանք՝ արձակ կամ ոտանավոր թարգմանութեամբ: Աս անգամ հոս դրածնիս Լամարթինին գեղեցիկ ոտանավորներէն մեկն է՝ ճիշդ թարգմանված: –Ալփոնսոս Լամարթին հիմա բոլոր Եվրոպայի մէջ խիստ անվանի մատենագիր է, ու Գաղղիացիոց առաջին բանաստեղծը կսեպվի... Մեր հիմա թարգմանածը Դաշնակոթեանց մեկ կտորն է, ուրիշ անգամ մեկալներուն ալ ճաշակը կուտանք»¹¹⁹: Այստեղ ավելի քան հստակ ձևակերպված է «Բազմավեպի» հետախու գրական քաղաքականութիւնը՝ ազգային գրականութեանից գատ թարգմանաբար ներկայացնել օտարազգի ժամանակակից և անվանի գրողների ստեղծագործությունները:

Գրական քաղաքականութեան բովանդակութեան մէջ փոփոխություններ են կատարվում բուրժուազիայի տիրապետութեան օրոք: Առաջադրվում են գրական պրոցեսի կառավարման նոր մեթոդներ և ձևեր: Սկզբնական շրջանում, երբ բուրժուազիան տապալեց ավատատիրական կարգերը, հարաբերականորեն առաջադեմ էր և հանդես էր գալիս ազատ ստեղծագործական գաղափարների, եկեղեցական և ազնվականութեան պարտադրած սիոլաստիկ կապանքներից մշակույթը և գրականութեանը ձերբազատելու դիրքերից: Արվեստագետներից պահանջում էր հերոսական կերպարների կերտում, մարդու իրավունքների, աշխատանքի մասին նոր գաղափարների հաստատում: Բուրժուազիան առաջադրեց նոր ստեղծագործական սկզբունքներ՝ առաջարկելով կլասիցիզմը փոխարինել նոր մեթոդներով (սենտիմենտալիզմ, ռոմանտիզմ, ապա նաև՝ ռեալիզմ):

Այսուհետ Լամարթինը ամենից հաճախ տպագրվող հեղինակն է: Նրա գրչին պատկանող ստեղծագործություններն այնքան շատ

¹¹⁹ «Բազմավեպ», 1843, թիվ 1, էջ 16:

են, որ այդ թարգմանություններով կարելի է մի մեծ ժողովածու կազմել: Պատահական է այդ ընտրությունը: Իհարկե՝ ոչ: Պատահական չէ, սակայն ոչ այն պատճառաբանությամբ, որ Լամարթինը «իդեալականացնում էր անցյալը և վարդագույն գույներով էր նկարում ավատական կավածատերերի վաղեմի աշխարհը, մորալը, կուլտուրան»¹²⁰, ինչպես փորձում է հիմնավորել հայ մամուլի մարքսիստ քննադատը: Լամարթինի գրավչությունը հենց Լամարթինի բանաստեղծությունն է, քնարականությունն ու բնապաշտությունը: Այդ ժամանակ, երբ «Բազմավեպը» Լամարթին էր թարգմանում, բանաստեղծի գրական փառքը հասել էր բարձրակետին, հիրավի համաեվրոպական ճանաչում ունեցող թերևս ֆրանսիացի առաջին գրողը:

Ինչ վերաբերում է այն դիտարկմանը, թե Լամարթինը «բարի հին անցյալի» երգիչն էր, որ «առաջարկում էր ոչ թե առաջ նետվել, այլ վերահաստատել հին կարգերը», և նա, «ռոմանտիզմը էությանը ռեակցիոն լինելով, արձագանքում էր» հետադեմ գաղափարախոսների հասարակական մտորումներին»¹²¹, ապա պետք է ասել, որ այդ հարցում էլ, մեղմ ասած, քննադատը իրավացի չէ: Բարդ, բայց հակասական չէ Լամարթին-հասարակական գործչի անցած ուղին, ինչպես կարծում է մարքսիստ քննադատը: Չմոռանանք նաև հիշատակել, որ Լամարթինը ոչ միայն մեծ բանաստեղծ էր, այլև եվրոպացի այն առաջին քաղաքական գործիչը, որ, հակադրվելով Թիերի քաղաքականությանը, դեպուտատների պալատում 1840 թվականին առաջարկեց Թուրքիայի մասնատման ծրագիր, համաձայն որի՝ Կոստանդնուպոլիսը պետք է հանձնվեր Ռուսաստանին, Եգիպտոսը՝ Անգլիային, իսկ Սիրիան՝ Ֆրանսիային (երեքն էլ գտնվում էին Օսմանյան կայսրության կազմում): Կարծում ենք՝ Լամարթինի կենսագրության այս փաստին դժվար թե տեղյակ չլինեին «Բազմավեպի» խմբագիրները:

Ինչ վերաբերում է հեղափոխությունների նկատմամբ «Բազմավեպի» վերաբերմունքին, ապա պետք է ասել, որ այդ հարցում ևս հանդեսի քննադատներն իրավացի չեն: Այսպես, 1863-ին հանդեսի

¹²⁰ Կարինյան Ա. Ա., Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, էջ 227:

¹²¹ Նույն տեղում:

20-ամյակին նվիրված հունվարյան համարում ասես ամփոփելով հեղափոխությունների նկատմամբ իր վերաբերմունքը՝ «Բազմավեպը» գրում է. «Ութևասաներորդ դարուն վերջերը (1789) Գաղղիա ընկերական հեղափոխություն մը ծագեցավ, որ ոչ միայն նույն երկրին վրա մեծ ազդեցություն ունեցավ, այլև բոլոր Եվրոպա, և նույնիսկ Արևելք անոր հետին ծփանքը հասան. աս հեղափոխությունս թեպետ արատավորեցավ արյունահեղ եղեռնագործությամբ և այլ սոսկալի ոճրագործություններով, գորոնք ունիցե կարծյաց տեր մարդիկ այսօրվան օրս սարսափով մը կդատապարտեն, սակայն մեկալ կողմանե ալ ոչ որ կժխտե, որ աս ընկերական մեծ շարժման սկզբնապատճառ եղած էին հին ընկերության պակասավոր օրենքները, անբավականք հառաջադեմ ընկերություն մը կառավարելու»¹²²:

Հանդեսի գրական հրապարակումների ցանկը մեծ է ու բազմազան: Վիթխարի է նաև ընդգրկված ժամանակաշրջանը՝ Անտիկ շրջանից մինչև իր հրատարակված ժամանակների եվրոպական, ամերիկյան, անգամ չինական գրականությունը: Բազմաբղետ է նաև ժանրային ընդգրկումը՝ առակներ, առածներ, բանաստեղծություններ, հատվածներ դյուցազներգություններից և ողբերգություններից, պատմվածքներ, մանրավեպեր, կատակերգություններ, անեկդոտներ, բանահյուսական երկեր, ակնարկներ, հրապարակախոսություն և այլն: Դրանց թվարկումն անգամ տասնյակ էջեր կարող է լցնել: Բնականաբար, այդ ամենին անդրադառնալ չենք կարող, ուստի փորձենք խոսել, մեր կարծիքով, ավելի կարևոր և էական գործերի ու խնդիրների մասին:

Անտիկ գրականությունը «Բազմավեպի» ամենից նախընտրելի շրջանն է: Առաջ անցնելով՝ ասենք, որ հայ իրականության մեջ այդ շրջանի գրականության, հանդեսի արտահայտությամբ՝ առաջին «ճաշակ» տվողները նույնպես Մխիթարյան հայերն են: Արսեն Բագրատունու («Իլիական»), Թովմաճյանի («Իլիական», «Ողիսական»), Հյուրմյուզյանի (Վիրգիլիոսի «Էնեական», Հորացիոսի «Արվեստ քերթողական»), Ղազիկյանի (Վիրգիլիոսի «Հովերգությունք»)

¹²² «Բազմավեպ», 1863, էջ 17:

թարգմանությունները իրենց մակարդակով միանգամայն նոր որակի բարձրացրին հայ թարգմանչական արվեստը՝ կրկնելով հինգերորդ դարի՝ մեր Ոսկեդարի թարգմանիչների խիզախությունը, ավելին՝ ինչոր տեղ անգամ գերազանցելով նրանց: Մխիթարյանները առանձին հակում էին ցուցաբերում առակների ու առածների նկատմամբ և սկզբում «Բազմավէպում», այնուհետև գրքով հայ ընթերցողի սեղանին դրեցին Եզովպոսի, Լաֆոնտենի, Կռիլովի առակները, Էպիկտետի առածները: Հանդեսում պարբերաբար տպագրվում են նաև հայ առակագիրների՝ Մխիթար Գոշի, Վարդան Այգեկցու առակներն ու ասույթները:

Մեծ ու բազմազան են «Բազմավէպում» թարգմանաբար տպագրված ստեղծագործությունների ծավալն ու բնույթը, սակայն հասկանալի պատճառներով խորհրդային գրականագիտությունը ամեն կերպ փորձել է նսեմացնել Մխիթարյանների կատարած ազգաշահ գործը՝ յուրաքանչյուր թարգմանության մեջ տեսնելով կաթոլիկ հոգևորականության հետադիմական աշխարհայեցողության դրսևորում¹²³: Մինչդեռ հետադարձ, անաչառ հայացքով գնահատելիս «Բազմավէպի» և առհասարակ Միաբանության կատարած գործը թարգմանության ասպարեզում աննախադեպ է և անգնահատելի:

Բնութագրելով այս կամ այն հեղինակին՝ «Բազմավէպը» տալիս է նաև տվյալ դարաշրջանի ընդհանուր բնութագրությունը՝ երբեմն դառնացած, երբեմն՝ քննադատաբար: Անգամ այս կարգի հոդվածներում և ակնարկներում երևում են հանդեսի որդեգրած կլասիցիստական սկզբունքները (մինչև 60-ականների կեսերը): «Կիրթ ախորժակը գնաց, տեղը եկավ փուռ գվարճախոսություն, ընտիր ոճը կորսվեցավ, տեղը մտավ իմաստակ ու կտրտած գուրցվածք մը: ...Նույն դարում հետ մեկտեղ սկսավ տեսակ մը բարոյական և ուսումնական խռովություն մը»¹²⁴, – բնութագրելով 18-րդ դարում կատարված գեղա-

¹²³ Տե՛ս Հայ նոր գրականության պատմություն, հ. 1, Ե., ԳԱ հրատ., 1962, էջ 32-36: **Ա. Ա. Կարինյան**, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 2, Ե., 1960, էջ 244-265:

¹²⁴ «Բազմավէպ», 1845, էջ 301:

գիտական, գեղարվեստական և բարոյական փոփոխությունները՝ արձանագրում է հանդեսը:

Երբեմն քննադատական սլաքն ուղղվում է ֆրանսիացի լուսավորիչների աթեիստական հայացքների դեմ՝ գրելով, թե «լուսավորյալ դար ըսվեցավ, միայն թե աս լույսը շատ անգամ ծուռ բնագանցության խավարովը մթնեցավ: Նախապաշարմունքներու կարգը դրվեցան... աստվածապաշտության ու բարոյականին անտարակուսելի ճշմարտությունները»¹²⁵:

«Բազմավէպի» ուշադրությունից դուրս չի մնացել նաև ռուս գրականությունը (Կարամզին, Ժուկովսկի, Գլինկա, Կռիլով և ուրիշներ): Բազմաթիվ են Կռիլովի առակներից կատարված թարգմանությունները:

Սկսած 70-ական թվականների կեսերից՝ ռուս գրականության նկատմամբ «Բազմավէպի» հետաքրքրությունն էլ ավելի է մեծանում, հատկապես 1876-1877 թթ. ռուս թուրքական պատերազմի ժամանակ: Հանդեսում տպագրվում են մի շարք քաղաքագիտական հոդվածներ: Այսպես, «Աղեքսանդր Երկրորդ և Կորչաքով» հոդվածում հեղինակը նկատում է. «Ամենուն աչքն հիմա Ռուսիո վրա դարձեր են, և ամենուն միտքը գրավեր են Աղեքսանդր Բ և իր ծերունագարդ մեծ Գիվանապետն Աղեքսանդր Կորչաքով... Սկսյալ 1870 թվականեն, այսինքն Փրանկ-Բրուսական պատերազմին ծագմանեն Ռուսիա դարձյալ ձեռք բերավ իր նախկին ծանրակշռությունը»¹²⁶: Ռուսաստանի հանդեպ այսպիսի հետաքրքրություն եղել էր մեկ էլ Ղրիմյան պատերազմի ժամանակ (1853-1856), երբ հանդեսը այդ տարիների գրեթե յուրաքանչյուր համարում անդրադառնում էր պատերազմի դրվագներին և փորձում քաղաքագիտական վերլուծություններ կատարել: Եվ ասիա 1876 թ. համարներից մեկում թարգմանաբար ներկայացվում է Ա. Ս. Պուշկինի «Մահվան հիշատակ» բանաստեղծությունը:

¹²⁵ «Բազմավէպ», 1845, էջ 301:

¹²⁶ «Բազմավէպ» հանդիսարան, հ. ԼԳ, էջ 379, 382:

Դաս 15 -16 (4 ժամ սեմինար պարապմունք)

Քննարկվող հարցեր

1. XIX դարի 2-րդ կեսի հայ գրական կյանքը «Բազմավեպում»:
2. «Բազմավեպի» քարգմանչական քաղաքականության հիմնական ուղղությունները:
3. Անտիկ գրականությունը և ժամրային ընդգրկումը «Բազմավեպում»:
4. Ֆրանսիական գրականությունը «Բազմավեպում»:

Հանձնարարվող գրականություն

I. Սկզբնաղբյուրներ

1. «**Բազմալեռ**» հանդես, Վենետիկ, 1843, թիվ 1, 2, 4, 1844, թիվ 1, 2, 5, 6, 16, 18, 19, 20, 21, 24, 1845, թիվ 22, 1846, թիվ 2, 3, 7, 1847, թիվ 2, 3, թիվ 11-12, Հավելված, 1848, թիվ 1, 1848, թիվ 2, 8, 9, 20, 1849, թիվ 1, 4, 1850, թիվ 9, 1851, թիվ 10, 1852, թիվ 1, 1853, թիվ 6, 11, 16, թիվ 24, 1854, թիվ 2, 4, 13, 1855, թիվ 14, 1856, թիվ 1, 1857, թիվ 1, 3, 1862, թիվ 1, 6, 1863, թիվ 1, 1864, թիվ 11, 1872, թիվ 3, 1873, թիվ 7, 1876, թիվ 4, 6, 1878, թիվ 1-2, 1880, թիվ 3:
2. «**Արևմուտք**», Փարիզ, 26 հոկտեմբերի, 1947:
3. «**Ռազմիկ**», 1943, թիվ 5:
4. «**Յառաջ**», Փարիզ, 19 հոկտեմբերի, 1947:
5. «**Մասիս**», Բեյրութ, 27 օգոստոսի, 1947:
6. «**Փարիզ**», 1857, էջ 15-16
7. «**Մարմարա**», Կ. Պոլիս, 19 հոկտեմբերի, 1947:
8. «**Շարժում**», 26 ապրիլի, 1947:
9. «**Հյուսիսափայլ**», 1858, թիվ 5-6 և 11:
10. «**Հայրենիք**», Բոստոն, 22 հոկտեմբերի, 1947:

II. Հայերեն գրականություն

1. **Արեղյան Մ.**, Հայոց հին գրականության պատմություն, Երկեր, հատոր Բ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1967, 390 էջ:
2. **Աբովեան Խ.**, «Վերք Հայաստանի. Ողբ հայրենասիրի», ԳԱԹ հրատ., Երևան, 2004, 424 էջ
3. **Աթայան Է.**, Հոգի և ազատություն, Երևան, 2005, 622 էջ:
4. **Ալեքսանյան Ս. Գ.**, Հայ լուսավորական ռեալիզմը, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1980, 151 էջ:
5. **Ալիշան Ղ.**, Երկեր, Երևան, 1981, 400 էջ:

6. **Ալիշան Ղ.**, Ընդ եղենեա: Յամայութեան բացավայրի խորհրդածութիւն: Վենետիկ, տպագր. Ս. Ղազար (Մխիթարյան), 1874, 71 էջ:

7. **Աղայան Ղ.**, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1963, 387 էջ:

8. **Ավագովակի Գ.**, Ուրուագիծ ոգոյ եւ ընթացից Մխիթարեան միաբանութեան Վենետիկոյ: Փարիզ, գրանոց Դանիկ Արամյանի, 1857, 160 էջ:

9. **Էդոյան Հ.**, Շարժում դեպի հավասարակշռություն, Երևան, 2007, 501 էջ:

10. **Թումանյան Հ.**, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1959, 622 էջ:

11. **Լեո**, Հայոց պատմություն, հ. 3, Երևան, 1946, 1120 էջ:

12. **Խաչատուր վարդապետ Էրզրունցի**, Համառօտական իմաստասիրութիւն, Վենետիկ, 1711, 1751 էջ

13. **Խառատյան Ա. Ա.**, Հասարակական միտքը Չմյուռնիայի հայ պարբերական մամուլում (1840-1900), Երևան, ՀՀ ԳԱԱ, «Գիտություն», 1995, 383 էջ

14. **Խորենացի Մ.**, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ. 1981, 588 էջ:

15. **Կարինյան Ա.**, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ 1, Երևան, Հայկական ՍՍՌ- ԳԱ հրատ., 1956, 499 էջ:

16. **Կարինյան Ա.**, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 2, Երևան, Հայկական ՍՍՌ- ԳԱ հրատ., 1960, 636 էջ:

17. **Հերոդոտոս**, Պատմություն ինը գրքից, Երևան, ԳԱ հրատ., 1986, 651 էջ:

18. Հայ պարբերական մամուլի պատմություն, XVIII-XIX դարեր, հ. 1, Գահիրէ, 2006, 701 էջ:

19. Հայ նոր գրականության պատմություն, հ. 1, Երևան, ԳԱ հրատ., 1962, 557 էջ:

20. Համառօտ նկարագիր Մխիթարեան միաբանութեան, ի Վէ-նէտիկ, ի կղզին Ս. Ղազարու: Տպագրեալ ի նոյն կղզի ՌՄԿԸ (Հայ. և իտալ.): Վենետիկ, Ս. Ղազար, 1819, 127 էջ:

21. **Հովհան Ոսկեբերան**, Ճառերի ընտրանի Ս. Էջմիածին, 2007, 224 էջ:

22. **Հովհաննիսյան Ա.**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 2, 1951, 696 էջ:

23. ՀՍՀ, հ. 2, Երևան, 1976, 719 էջ

24. **Նալբանդյան Մ.**, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, ԳԱ հրատ., 1980, հ. 2, 447 էջ:

25. **Նալբանդյան Մ.**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, 1940, 367 էջ:

26. **Չօպանեան Ա.**, Գէմքեր: Գրիգոր Նարեկացի; Մխիթար [Սեբաստացի]; Աբովեան; Ալիշան; Այտնեան; Խրիմեան Հայրիկ; Կոմիտաս Վարդապետ; Թովմաս Թէրզեան; Գաբրիէլ Սունդուկեանց: (Հրատարակութիւն Հայ Կրթական հիմնարկութեան), Փարիզ: Տպ. «Գեղարուեստական», 1924, 165 էջ:

27. **Ջեյմս Ջոյս**, «Արվեստագետի դիմանկարը պատանության հասակում» (թարգմ. անգլերենից և ծանոթագրությունները՝ Հ. Շարորյանի), Երևան, «Հույս և սեր» հրատ., 2006, 350 էջ:

28. **Սարինյան Ս.**, Հայկական ռոմանտիզմ, Ե., ԳԱ հրատ., 1966, 558 էջ:

29. **Օշական Յ.**, Համապատկեր արևմտահայ գրականության, հ. 2, Երուսաղեմ, 1953, 444 էջ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԸՆԹԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ.....	3
ԱԿՆԿԱԼՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.....	3
ԴԱՍԸՆԹԱՅԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ.....	3
ԴԱՍԸՆԹԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	
Դաս 1 (2 ժամ դասախոսություն)	
Ներածություն.....	4
Դաս 2 (2 ժամ դասախոսություն)	
«Բազմավեպի» ծնունդն ու երկետային հիմնադրույթները	10
Դաս 3 (2 ժամ դասախոսություն)	
«Բազմավեպի» խմբագրական քաղաքականությունը 1843-1880 թվականներին	16
Դաս 4 (2 ժամ դասախոսություն)	
«Բազմավեպի» գնահատությունը հայ մամուլում.....	24
Դաս 5-6 (4 ժամ սեմինար պարապմունք).....	32
Դաս 7 (2 ժամ դասախոսություն)	
Հոգևոր-մշակութային և ազգային կյանքի հիմնախնդիրները «Բազմավեպ» հանդեսում. հոգևոր մշակույթի ըմբռումը.....	33
Դաս 8 (2 ժամ դասախոսություն)	
Ազգային հիմնախնդիրների ըմբռումը «Բազմավեպում»	41
Դաս 9-10 (4 ժամ սեմինար պարապմունք)	
Դաս 11 (2 ժամ դասախոսություն)	
Հայոց լեզվի խնդիրների արծարծումը «Բազմավեպում»	48
Դաս 12 (2 ժամ դասախոսություն)	
«Բազմավեպը» իտալական իրականության համատեքստում	51
Դաս 13 (2 ժամ սեմինար պարապմունք)	59
Դաս 14 - 15 (4 ժամ դասախոսություն)	
«Բազմավեպի» գրական և թարգմանչական քաղաքականությունը	59
Դաս 15 -16 (4 ժամ սեմինար պարապմունք).....	67
Հանձնարարվող գրականություն	68

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԻ ՄԱՄՈՒԼԸ

(«ԲԱԶՄԱՎԷՊԸ» 1843-1880-ական թթ.)

(դասախոսություններ)

Կազմող՝ ք. գ. ք., Լուսինե Խաչատրյան

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալարյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Տպագրված է «Time to Print» օպերատիվ տպագրությունների սրահում:
ք. Երևան, Խանջյան 15/55

Ստորագրված է տպագրության՝ 27.05.2019:
Չափեր՝ 60x84¹/₁₆: Տպ. մամուլը՝ 4.5:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.y-su.am



ԵՐԱՏՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ
ՆՐԵՎԱՆ 2019
publishing.ysu.am